Ազգ
Azg
17-23 ԱՊՐԻԼ 2026 ՈՒՐԲԱԹ 014(5882)
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ISSN: 1829-1651
9 771829 165003 26014

## Երուսաղեմում պատվում են հրեաների կյանքը փրկած հայերին

Ողջակիզման հիշատակի օրը Երուսաղեմում բացված բացառիկ ցուցահանդեսի մասին է գրում սաղեմահայ **Նիկոլ Ջանսըզյանը** (Nicole Jansezian) ապրիլի 15-ին ALL ISRAEL NEWS լրատվականում: Ծավալուն հոդվածը պատմում է Յադ Վաշեմում ճանաչված՝ «Ազգերի արդարներ» կոչմանն արժանացած 24 հայերի մասին, որ Հայոց ցեղասպանության վերապրող լինելով, անձնվիրաբար փրկել են հրեաներին Ողջակիզման արհավիրքից՝ փաստելով, որ հալածյալ ժողովուրդների պատմությունը նման է իրար: 2 խոսուն օրինակ՝ **Արա Երեցյանը** Հունգարիայում փրկել է 400 հրեայի, **Գրիգորի** եւ **Պրան Թաշչյանները** հրեա երեխաներին թաքցրել են Ղրիմի իրենց տանը: Ցուցահանդեսի կազմակերպիչ հրեա գիտնական **Յիսկա Հարանին** վաղուց է պաշտպանում հայ-հրեական դրական հարաբերությունները, գրում է Ջանսըզյանը:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա

*ՕՐԵՐԻ ՀԵՏ*

## Լիբանան՝ քավության նոխազը Արաբական աշխարհի, եւ ոչ միայն...

Լիբանանի Հանրապետություն՝ իր հարուստ պատմությամբ ծանոթ մի փոքրիկ երկիր, 10000 ք.կ.-ից քիչ ավել տարածքով եւ շուրջ 3 միլիոն բնակչությամբ, Հին աշխարհին առավելաբար Pheonicia, իսկ հայերիս համար՝ Փյունիկե անունով հայտնի, ընկած Միջերկրական ծովի աջ ափի երկայնքին, հյուսիսից եւ արեւելքից շրջափակված Սիրիայի, իսկ հարավից՝ Իսրայելի (նախկին Պաղեստին) կողմից, շնչառության համար ձախից միայն կապուտակ ծովն ունենալով, որի վրա գտնվող իր հնադարյան հռչակավոր նավահանգիստներն են, վերեւից ներքեւ՝ Թրիպոլին, Բիբլոսը (արաբերեն՝ Ժիբեյլ), Ժյունին, մայրաքաղաք Բեյրութը, Սայդան (Sidon) եւ Սուրը (Tyre): Դարեր շարունակ ծովային մեծ ճանապարհի վրա գտնվող այդ նավահանգիստները եղել են հին եգիպտացիների, հույների, հռոմեացիների, արաբների, Կիլիկիայի հայկական թագավորության, այնուհետեւ օսմանյան թուրքերի առեւտրատնտեսական գրավչության կենտրոնները: Եվրոպացիք, հատկապես ֆրանսիացիները, նավահանգստային այդ երկրով սկսել են զբաղվել միայն 1860-ից հետո, երբ թուրքերը, իրենց սովորության համաձայն, սկսեցին քրիստոնյաների ջարդ կազմակերպել մասնավորաբար Լեռնալիբանանում, որի բնակչությանը սովամահության ենթարկեցին: Լիբանանը դարձավ ինքնավար միայն 1861 թ.ին, երբ երկիրն անցավ ֆրանսիական մանդատի տակ, ապա, 1926-ին, ստացավ հանրապետության կարգավիճակ՝ ֆրանսիական հոգատարության ներքո, իսկ 1944-ին դարձավ անկախ հանրապետություն՝ անդամ ՄԱԿ-ի եւ նորաստեղծ Արաբական լիգայի:

Մինչ այդ Լիբանանն արդեն դարձել էր ապահով հանգրվան թուրքական հալածանքներից, ջարդերից ու ցեղասպանությունից խույս տված քրիստոնյա քաղդեացիների, ասորիների, հունադավան կաթոլիկ քրիստոնյաների, ինչպես նաեւ առաքելական եւ առհասարակ բոլոր հայերի համար:

Այդ ապահով հանգրվանից հետագայում օգտվեցին տարածաշրջանի այլ երկրներից գաղթած բազմությունները, երբ, 1948-ին, Պաղեստինում ստեղծվեց Իսրայել պետությունը, որի հիմնադիրները, ինչպես գրել եմ նախապես, խոստացել էին արեւմտյան քաղաքակրթություն բերել հարեւան երկրներին եւ համերաշխ գոյակցել պաղեստինցի արաբների հետ, առաջին վայրկյանից դրժեցին իրենց խոստումը եւ փոխարենը բնիկ տեղացիների համար դժոխք դարձրեցին ոչ միայն Պաղեստինը, այլեւ հարեւան երկրները՝ տեղահանված հարյուր հազարավորների քշելով հատկապես Լիբանան: Բռնագաղթեցվածների մեջ կային նաեւ մի քանի հազար հայեր՝ Թուրքիայից արդեն իսկ գաղթեցված, որոնք մի գիշերվա մեջ Հայֆայից, Յաֆայից ու Թել-Ավիվից շնչակտուր հասան Բեյրութ, Թրիպոլի, Լաթաքիա, իսկ մի մասը՝ Երուսաղեմ, որն այն ժամանակ, Բրիտանիայի տիրապետության տակ էր գտնվում:

Սակայն անհամեմատ մեծ էր թիվը բռնագաղթեցված պաղեստինցի արաբների, որոնք, Արաբական լիգայի որոշմամբ հյուրընկալ երկրներից, այդ թվում՝ Լիբանանից չստացան քաղաքացիություն այն հաշվարկով, որ, իբր, պահելով պաղեստինյան ինքնությունը՝ հետագայում իրավական կռվան կունենան բռնագրավյալ իրենց երկիր վերադառնալու...

Ամենածանր կացությունն ստեղծվեց Լիբանանում, որը չունենալով համապատասխան զինուժ (պետական ղեկավարները, հույսները դնելով արաբական ուժեղ ու հարուստ երկրների վրա՝ հաճախ են պնդել, որ Լիբանանի ուժը իր ուժ չունենալու մեջ է կայանում), չկարողացավ, չէր կարող, դիմագրավել իր հարավային հարեւանի արյունոտ ոտնձգությունները՝ մի կողմից, ինչպես նաեւ ներքին զինյալ խմբավորումների, այդ թվում՝ Պաղեստինի Ազատագրման կազմակերպության (PLO) հակաիսրայելական զինյալ հարձակումներն ու ահաբեկչական գործողությունները՝ մյուս կողմից: Դա հրաշալի առիթ էր Հրեական պետության համար Լիբանանի հողի վրա անել այն՝ ինչ ուզում է: Վիճակը առավել բարդացավ, երբ արաբական երկրներին ֆինանսական ու զինական առաքումներից սկսեցին օգտվել նաեւ բուն լիբանանյան համայնքային կազմակերպությունները, որի հետեւանքով 1975-1990 թթ.ին, ամբողջ 15 տարի, տեղի ունեցավ քաղաքացիական կործանիչ պատերազմը:

Գալով ներկա օրերին, երբ սաստկացել է Իրան-Իսրայել հակամարտությունը, խնդրին միջամուխ է եղել, այն էլ՝ ոտքով ու ձեռքով, Թրամփի Ամերիկան եւ արդեն 2-րդ պատերազմն է ընթանում, միշտ օգտվելով նման առիթներից՝ Իսրայելը դարձյալ ներխուժել է Լիբանան, ռմբակոծում է ոչ միայն երկրի հարավը, այլեւ մայրաքաղաքի տարբեր շրջանները ու կան բազմաթիվ զոհեր: Իսրայելը պատճառային թիրախ է ընտրվել Իրանի միջնորդային (proxy) կազմակերպությունը՝ Հըզբոլլահը, որին համակիր է լիբանանյան ամենաբազմանդամ շիա համայնքը, որն սպառնում է Իսրայելի հետ Հըզբոլլահի զինաթափման շուրջ համաձայնության գալու դեպքում տապալել երկրի կառավարությունը եւ քաղաքացիական նոր պատերազմ հրահրել:

Օրերը խիստ լարված են: Խուսափելու համար ներքին արյունահեղությունից, Լիբանանի Հանրապետության նախագահ Ժոզեֆ Աունը երեկ հայտարարեց, թե ինքը հրաժարվում է ամերիկյան կողմի թելադրած՝ Բենիամին Նեթանյահուի հետ խոսելուց, թեեւ ողջունում է երեկոյան ժամը 19-ից սկսված ժամանակավոր հրադադարի փաստը:

Ըստ երեւույթին բոլորն են սպասում Իսլամաբադում ընթացող իրանա-ամերիկյան բանակցությունների արդյունքին, այդ թվում՝ փոքրիկ, սիրելի Լիբանանը, որը հայտնվել է, արաբական երկրների հայացքի ներքո, իսրայելաամերիկա-իրանյան ունկանի մեջ ու թպրտում է անզոր:

Հին Փյունիկեն՝ Նոր Լիբանանը այս անգամ եւս դուրս կգա՞ ողջ եւ առողջ: Սաղթենք:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Սփյուռքի զորաշարժը եւ հայության խնդիրները Փարիզի համաժողովում. Արցախն ու Հայաստանը գլխավոր թեմաներ

**ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ**

Փարիզ-Պրահա



Ապրիլի 11-12-ը Փարիզում անցկացվեց Սփյուռքի զորաշարժին նվիրված խորհրդաժողով, որի նպատակն էր վերջին տարիներին հայության կարեւորագույն խնդիրների ու մարտահրավերների քննարկումը: Թեեւ համաժողովը կազմակերպել էր խորհրդաժողովի համադրող կազմը, որին անդամակցում էին տարբեր համայնքների ներկայացուցիչներ, սակայն անզեն աչքով նկատելի էր, որ կազմակերպչական աշխատանքներում զգալի է ՀՅԴ մասնակցությունը: Ամեն դեպքում դա չխանգարեց, որպեսզի քննարկումներն անցնեն բաց ու ազատ մտքերի փոխանակման մթնոլորտում: Ավելին, շատ հրավիրյալներ չէին կարողացել ներկա գտնվել անձնական պատճառներով, բայց շատ կարեւոր անհատներ էլ ուշացումով էին իմացել եւ այլեւս չէին կարողացել մասնակցել դահլիճի սահմանափակ տեղերի պատճառով:

Այսպիսով, 25 երկրներից ժամանած 150-ից ավելի պատվիրակները ունկնդրեցին նախօրոք ընտրված բանախոսների ելույթները, ապա նրանց հարցեր ուղղեցին, շատերը հանդես եկան հակիրճ ելույթներով:

Բացման խոսքում խորհրդաժողովի համադրող մարմնի անդամ **Հովսեփ Տեր-Գեւորգյանը** նշեց, որ 2018 թվականից ի վեր Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից հայկական ազգային շահերից՝ Հայոց Ցեղասպանության եւ Արցախի թղթածրարներից հրաժարվելը, Արցախի բռնի հայաթափումը, ինչպես նաեւ հայկական ինքնության դեմ ուղղված սպառնալիքներն ու ազգային հաստատությունների՝ հայ եկեղեցու դեմ հարձակումներն աննախընթաց օրհասական իրադրություն են ստեղծել ամբողջ հայկական աշխարհի համար:

Խորհրդաժողովի չորս հիմնական թեմաներն էին՝ Սփյուռքի ռազմավարական դերն ազգային հիմնախնդիրների լուծման գործում եւ քաղաքական օրակարգը. Ազգային արժեքների եւ Հայոց եկեղեցու կարեւորությունը Սփյուռքում՝ հայկական ինքնության **պահպանման** առումով. նոր իրավիճակի մարտահրավերները, Հայաստան-Սփյուռք հարաբերությունների հիմնահարցերը եւ Սփյուռքի զորաշարժն ու վերաշխուժացումը՝ հանուն համահայկական նպատակների: Այս նպատակների շարքում հատկապես կարեւորվեց հունիսի 7-ին Հայաստանի խորհրդարանական ընտրությունների անցկացումն ու ողջ հայության ակտիվ մասնակցությունը: Այս հարցում թերեւս ժողովականների վրա հակասական ազդեցություն ունեցավ Հայաստանի նախկին վարչապետ **Հրանտ Բագրատյանի** բոցաշունչ ելույթը, որի հիմնական միտքն այն էր, որ սփյուռքն առժամանակ պետք է մի կողմ թողնի իր խնդիրների քննարկումը եւ կենտրոնանա հունիսի 7-ի ընտրությունների վրա, քանզի այդ օրն է որոշվելու Հայաստանի ապագան՝ **կլինի՞** հայկական պետություն, **թե՞** մենք կկորցնենք նաեւ մեր պետականությունը: Իհարկե, անժխտելի է, որ գալիք ընտրությունները վճռորոշ են լինելու ողջ հայության ապագայի համար, քանի որ դրանք իրենց ազդեցությունն են ունենալու ոչ միայն հայաստանցիների, այլեւ Հայաստան-Սփյուռք հարաբերությունների, Հայ Առաքելական եկեղեցու եւ ածանցյալ այլ բնագավառների վրա:

⇨3

## Ընդդիմադիր եւ իշխանական պատրանքներ

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Վերջին մի քանի օրը, ԱԺ-կառավարություն հարցուպատասխանին ու ԱԺ-ում անցած տարվա բյուջեի կատարողականի ներկայացման ընթացքում ներառյալ, հասկանալի դարձավ, որ իշխանությունը գլխավոր ընդդիմադիր եւ իր հիմնական մրցակից է նշանակել **Սամվել Կարապետյանի** «Ուժեղ Հայաստանին», ու իշխանականները այն աստիճան են կենտրոնացել այս դաշինքի ու նրա փաստացի ղեկավար Սամվել Կարապետյանի վրա, որ մոռացել են (կամ՝ համարյա թե մոռացել են) **Քոչարյանին, Ծառուկյանին, Վանեցյանին, Թաթոյանին,** տո **Էդմոն Մարուքյանին** եւ անընդհատ խոսում են Սամվել Կարապետյանից: Թեկուզեւ՝ հիմնական հավակնորդ ընդդիմադիր երեք ուժերին ձեռքի հետ անվանում են եռագլուխ ընդդիմություն: Բայց նույնիսկ ԿԸՀ նախագահ **Վահագն Հովակիմյանը** թիմակից պատգամավորի՝ այլ երկրի քաղաքացիների գեներացրած ուժը չգրանցելու հետաքրքրությանն ի պատասխան ասաց, թե Հայաստանի ընտրական օրենսդրությունը բավական լոյալ է, եւ ԿԸՀ-ն խախտումներ թույլ չտված ուժերին չգրանցել չի կարող: Ի դեպ՝ մեր հարցին ի պատասխան էլ ԱԺ փոխնախագահ **Ռուբեն Ռուբինյանն** ասաց, թե հնարավոր չի համարում «Ուժեղ Հայաստանի» չգրանցումը:

Այսինքն Ընտրական օրենսգրքի փոփոխությունը՝ դաշինքի անվան մեջ անձնանունը բացառող, թանձր բառապաշարով հակակարապետյանական խոսույթը, դաշինքի անդամների եւ համակիրների բերման ենթարկելու փաստերը եւ այլն, բոլորովին չեն նշանակում, որ «Ուժեղ Հայաստանի» ցուցակն ու ընտրության մասնակցության հայտը ԿԸՀ-ն չի գրանցի:

⇨8

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրանագետ

# Իրանն ու ԱՄՆ-ը Կշարունակե՞ն բանակցությունները

## *Իրանի հետ պատերազմը մոտենո՞ւմ է ավարտին*

Թեհրանի եւ Վաշինգտոնի միջեւ այս պահին հայտարարված է ռազմական գործողությունների ժամանակավոր դադար: Ստեղծված իրավիճակը կարելի է բնութագրել որպես «անկայուն հավասարակշռություն», որը մեծապես կախված է պահի ազդեցության տակ ընդունվող որոշումներից եւ հնարավոր զարգացումներից:

Պակիստանի մայրաքաղաք Իսլամաբադում Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ տեղի ունեցած 21-ժամյա բանակցություններն ավարտվել են առանց շոշափելի արդյունքների: Այդ պատճառով միջազգային դիտորդները մտահոգություն են հայտնում բանակցությունների համար նախատեսված երկշաբաթյա հրադադարի խոցելիության վերաբերյալ:

Միեւնույն ժամանակ շրջանառվում են նաեւ հուսադրող կանխատեսումներ բանակցությունների վերսկսման մասին: Այս մասին խոսել է ԱՄՆ նախագահ **Դոնալդ Թրամփը**՝ նշելով, որ Պակիստանում առաջիկա երկու օրերին բանակցությունների վերսկսումը բացառել չի կարելի:

Ավելի վաղ «Reuters» գործակալությունը, հղում անելով իրազեկ աղբյուրներին, գրել էր, որ ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ բանակցությունները կարող են տեղի ունենալ արդեն այս շաբաթվա վերջին կամ հաջորդ շաբաթվա սկզբին: Այլ լրատվական գործակալություններ եւս չեն բացառել բանակցային գործընթացի վերսկսման հնարավորությունը:

«Reuters»-ը, հղում անելով պակիստանցի երկու աղբյուրների, նաեւ նշել է, որ բանակցությունների հաջորդ փուլի անցկացման ժամկետների շուրջ համաձայնություն ձեռք բերելու հարցում Իսլամաբադը մշտական կապի մեջ է Վաշինգտոնի եւ Թեհրանի հետ:

Թեեւ իրանական կողմը դեռ չի հաստատել բանակցությունները վերսկսելու իր դիրքորոշումը, պակիստանցի մի պաշտոնյա հավաստիացրել է, որ Իսլամաբադը ստացել է Թեհրանի համաձայնությունը:



Միաժամանակ ամերիկյան պաշտոնյաները «Associated Press» գործակալությանը հայտնել են, որ որպես ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ բանակցությունների հնարավոր հարթակ, Իսլամաբադից բացի դիտարկվում է նաեւ Ժնեւը: Շվեյցարիայի կառավարությունն իր հերթին հայտարարել է միջնորդելու պատրաստակամության մասին:

Ըստ «Al Monitor»-ի, Անկարան նույնպես ներգրավված է միջնորդական գործընթացում: Աղբյուրի համաձայն՝ Թուրքիայի հետախուզական ծառայությունը եղել է հրադադարի հաստատման հիմնական միջնորդներից մեկը՝ օգտագործելով ԱՄՆ-ի, Իրանի եւ Պակիստանի հետ ունեցած հարաբերությունները եւ միաժամանակ առաջնորդվելով իր անվտանգության շահերով:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը եւս ընդգծել է հրադադարի պահպանման կարեւորությունը եւ կոչ արել շարունակել բանակցությունները: ԻՌՆԱ-ի հաղորդմամբ, **Անտոնիո Գուտերեշը** ապրիլի 13-ին հայտարարել է. «Մի քանի շաբաթ տեւած ավերածություններից եւ տառապանքներից հետո պարզ է, որ Մերձավոր Արեւելքում ընթացիկ հակամարտությունը ռազմական լուծում չունի»:

Նա նաեւ ընդգծել է. «Կոչ եմ անում վերսկսել բանակցությունները՝ համաձայնության հասնելու համար: Հրադադարը պետք է լիովին պահպանվի, եւ բոլոր խախտումները պետք է դադարեցվեն»:

Գուտերեշը հավելել է, որ հակամարտության բոլոր կողմերը պետք է միջազգային իրավունքի համաձայն հարգեն նավարկության ազատությունը, այդ թվում՝ Հորմուզի նեղուցում:

ԱՄՆ նախագահ **Դոնալդ Թրամփը** Fox News-ին տված հարցազրույցում հայտարարել է, որ Իրանի հետ պատերազմը մոտենում է ավարտին, եւ որ Իրանը շահագրգռված է համաձայնության հասնելու հարցում:

Ապրիլի 13-ին նույն հեռուստաալիքին տված հարցազրույցում Թրամփը, անդրադառնալով պատերազմի պատճառներին, նշել է. «Ես ստիպված էի փոխել ուղղությունը, որովհետեւ հակառակ դեպքում Իրանը հիմա կունենար միջուկային զենք»:

Պատերազմի ավարտի վերաբերյալ հարցին ի պատասխան՝ նա ասել է. «Կարծում եմ՝ մոտ է ավարտին, այո: Ես դա այդպես եմ տեսնում»:

Թրամփը նաեւ հավելել է. «Եթե հենց հիմա հետ քաշվենք, Իրանի վերակառուցումը կտեւի 20 տարի, եւ մեր գործը դեռ ավարտված չէ: Կտեսնենք, թե ինչ կլինի»:

ԱՄՆ փոխնախագահ **Ջեյ Դի Վենսը** ապրիլի 14-ին Ջորջիա նահանգում հայտարարել է, որ աշխատում է Թրամփի «մեծ գործարք» Իրանի հետ կյանքի կոչելու ուղղությամբ:

Վենսը, որը ղեկավարել է Իսլամաբադում անցկացված բանակցությունները, նշել է, որ Թրամփը չի ձգտում «փոքր համաձայնության», այլ ցանկանում է այնպիսի պայմանավորվածություն, որի դեպքում Իրանը չի ունենա միջուկային զենք, իսկ իրանցի ժողովուրդը կկարողանա բարգավաճել եւ զարգացնել տնտեսությունը:

Նրա խոսքով, համաձայնության չհասնելու հիմնական պատճառը հենց Թրամփի պահանջների մեծ ծավալն է: «Մենք շարունակելու ենք բանակցությունները եւ փորձելու ենք հասնել այդ նպատակին»,- ասել է նա:

CNN-ի հաղորդմամբ, Թրամփի վարչակազմը քննարկում է հրադադարի ժամկետի ավարտից առաջ Իրանի հետ երկրորդ բանակցային հանդիպման հնարավորությունը: Քննարկվում են նաեւ հանդիպման հնարավոր ամսաթվերն ու հարթակները, այդ թվում Ժնեւը եւ Իսլամաբադը:

Պաշտոնյաները նշում են, որ դիվանագիտական լուծման հնարավորությունները դեռ սպառված չեն, եւ անհրաժեշտության դեպքում կարող է քննարկվել հրադադարի երկարաձգումը՝ բանակցությունների համար լրացուցիչ ժամանակ ապահովելու նպատակով:

Պակիստանցի դիվանագիտական աղբյուրը, անդրադառնալով 21-ժամյա բանակցություններին, նշել է, որ չնայած համաձայնության բացակայությանը՝ այդ հանդիպումը դիվանագիտական գործընթացի ընդամենը մի փուլ էր:

Այսպիսով, եթե բանակցությունները ձախողվեն, երկշաբաթյա հրադադարը կողմերի համար կլինի ոչ ավելին, քան ժամանակ շահելու, դիրքերը վերագնահատելու եւ ռազմական գործողությունների հնարավոր հաջորդ փուլին նախապատրաստվելու միջոց:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

# Ադրբեջանը ոչնչացնում է Արցախի եկեղեցիները. CNA-ն ահազանգում է՝ Ստեփանակերտի Սուրբ Հակոբը հողին է հավասարեցվել

Կաթոլիկական լրատվական գործակալությունը (CNA) ապրիլի 15-ին անդրադարձել է Ադրբեջանի վանդալիզմի վերջին դրսեւորմանը՝ Ստեփանակերտի Սուրբ Հակոբ եկեղեցու հիմնահատակ ոչնչացմանը: **Ալեքսանդր Ֆոլցի** (Alexander Folz) «Ադրբեջանը ոչնչացրել է Ստեփանակերտի հայ առաքելական եկեղեցին» վերնագրով գերմաներեն հրապարակումը հասանելի է նաեւ գործակալության ֆբ եւ X սոցհարթակներում: Լրագրողը տեղեկատվությունը հիմնավորող հղումների մեջ նախ նշում է Արցախի թեմի տարածած հայերեն հաղորդագրությունը: «Ադրբեջանի իշխանությունները հիմնահատակ ավերել են Ստեփանակերտի Սուրբ Հակոբ հայկական եկեղեցին: Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը խստագույնս դատապարտել է ավերածությունը եւ կոչ արել միջազգային կառույցներին միջամտել, հայտնում է CNA-ն՝ մեջբերելով թեմի հայտարարությունից՝ «Մշակութային այս ցեղասպանությունը, որն իրականացվում է համակարգված, նպատակային եւ պետական մակարդակով, տեղի է ունենում ողջ աշխարհի աչքերի առջեւ»: «Սուրբ Հակոբ եկեղեցին կառուցվել է 2005 թվականին: Մինչեւ դրա կառուցումը, հավատացյալների համար պատարագ էին մատուցում խաղաքի թատրոնի շենքում, որ նախկինում կրոնական շինություն էր: Խորհրդային կառավարությունը շենքը գործածել էր՝ փոխելով բնույթը, ծանուցում է CNA-ը՝ հղում անելով The Armenian Mirror-Spectator-ի ապրիլի 12-ի համարում **Մարութ Վանյանի** հոդվածին: «Տարիներ շարունակ Սուրբ Հակոբը Ստեփանակերտի հայ համայնքի հոգեւոր կենտրոնն է եղել: 2023 -ի աշնանը, ԼՂ-ից հայերի արտագաղթից հետո, խաղաքն Ադրբեջանի վերահսկողության տակ է», գրում է CNA-ն: Կաթոլիկական գործակալությունը Սուրբ Հակոբի հիմնահատակ ոչնչացման տեսապատկերը որոնողներին հուշում է այն գտնել New Artsakh ֆբ էջում, այնուհետ հավելում Արցախի մշակույթի եւ զբոսաշրջության նախկին նախարար **Սերգեյ Շահվերդյանի**՝ եկեղեցին հողին հավասարեցնելու՝ սոցցանցերում հասցած տեղեկությունը: Ալեքսանդր Ֆոլցը նշում է, որ Ստեփանակերտի մյուս՝ Սուրբ Աստվածամոր մայր տաճարի ճակատագիրն էլ վտանգված է եւ հղում անելով Արցախի թեմին, թվարկում արդեն ավերված պաշտամունքի վայրերը՝ Շուշիի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, Տանձատափի եւ Մոխրենեսի Սուրբ Սարգիս եկեղեցին, Բերձորի Համբարձման եկեղեցին եւ Մեխակավանի Զորավոր Աստվածածինը: Թեմը կոչ է արել միջազգային կառույցներին անհապաղ միջամտել եւ կանխել հետագա ավերածությունները:







*Լուսանկարները՝ ֆբ New Artsakh էջից*

CNA-ն եզրափակում է հոդվածը՝ հետեւյալ պարբերությամբ՝ «Ադրբեջանի իշխանությունները բազմիցս ընդգծել են, որ տարածաշրջանում գտնվող հայկական եկեղեցական շինությունները պատկանում են պատմության մեջ հիշատակվող կովկասյան ալբաններին: Սա կասկածի տակ է դնում այս վայրերի հայկական ծագումը: Հայերը մերժում են այս դասակարգումը՝ այն համարելով պատմականորեն անհիմն»: Արժե հիշատակել, որ հայերի հետ Զիա Բունիաթովի ալբանական մտացածին եւ վտանգավոր կեղծիքը փաստերով հերքում են նաեւ միջազգային հեղինակավոր գիտնականներ: «**Ազգի**» ընթերցողներին ծանուցել ենք **Յասմին Դում-Թրագութի** եւ **Յոսթ Գիպպերթի** համահեղինակած գրքի մասին ( Caucasian Albania: An International Handbook, ed. Jost Gippert and Jasmine Dum-Tragut, Berlin/Bosten: De Gruyter 2023): Անցյալ տարի անդրադարձել ենք մայիսի 26-28-ին Բեռնում հրավիրված Արցախի ժառանգության համաժողովին, որի ժամանակ Յասմին Դում-Թրագութի զեկուցումը նվիրված էր քրիստոնեական Աղվանքի փաստական հիմքին եւ ադրբեջանական ալբանացման կեղծիքի բացահայտմանը: Ի դեպ Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը վերջերս հրապարակեց Բեռնի համաժողովի զեկուցումները:

# Սփյուռքի զորաշարժը եւ հայության խնդիրները Փարիզի համաժողովում. Արցախն ու Հայաստանը գլխավոր թեմաներ



⇨1 Բայց այստեղ մի շատ կարեւոր հարցադրում կա, որ ցանկանում ենք ուղղել հայաստանյան ընդդիմությանը. իսկ ի՞նչ է արել ընդդիմությունը 2021 թվականի ընտրություններից հետո, որպեսզի հայաստանյան հասարակությունը այսօր կոտրած տաշտակի առջեւ չկանգնի: Այդ ընտրություններից անմիջապես հետո պետք էր ամեն օր ու ամեն ժամ ընդդիմադիրները լինեին Հայաստանի մարզերում, դուրս գային սոցիալական ցանցերից ու **առցանց** ելույթների ձեւաչափերից, շփվեին հասարակ մարդկանց հետ, ներկայացնեին իրենց ծրագրերը, այնինչ միայն հիմա, ընտրություններից ընդամենը երկու ամիս առաջ, սփյուռքին օգնության կոչ են ուղղում: Ներողամիտ կլինենք, բայց սա ընդամենը քաղաքական կարճատեսության արդյունք է: Իհարկե, սփյուռքը կրկին մնում է մտահոգ, եւ կրկին իր բարոյական ու մասնագիտական աջակցությունն է հայտնում Հայաստանի ժողովրդին, ինչին անդրադարձ կատարվեց նաեւ խորհրդաժողովի բազմաթիվ ելույթներում եւ եզրափակիչ հայտարարության տեքստում, որն ընդունվեց միաձայն:

Ինչեւէ, վերադառնալով խորհրդաժողովի հիմնական այլ թեմաներին, նշենք, որ անչափ կարեւոր էր Արցախի պատվիրակության ներկայությունը եւ արցախահայության պատգամի, Բաքվում գտնվող պատանդների ու գերիների, Հայաստանում գտնվող արցախցիների խնդիրների մասին մտքերի փոխանակումը: Արցախի Ազգային ժողովի նախագահ, ԱՀ նախագահի պաշտոնակատար **Աշոտ Դանիելյանի** ելույթի հիմնական պատգամը հստակ էր՝ Արցախի էջը փակված չէ, գերիների խնդիրը պետք է լինի օրակարգի առաջնահերթություններից եւ, իհարկե, արցախահայության վերադարձի իրավունքը պետք է լինի միջազգային տարբեր հարթակներում քննարկման թեմա:

Այս խնդրին իր ելույթում անդրադարձավ նաեւ Արցախի մարդու իրավունքների պաշտպան **Գեղամ Ստեփանյանը**, նշելով որ Հայաստանում այսօր ամեն օր սպանում են Արցախ վերադարձի հույսը: Եվ այս խնդրում, քանի որ իրենց ռեսուրսները սահմանափակ են, միակ աջակիցը մնում է հայկական սփյուռքը: Նրա ասելով, այսօր Հայաստանում գրանցված 25 հազար արցախցի շահառուներից միայն 2500-ն են, որ կարողացել են երկարաժամկետ հաստատվել Հայաստանում: Լավատեսական էր նախկին վարչապետ, ԱԺՄ նախագահ **Վազգեն Մանուկյանի** պատգամը, որ պետք չէ ընկճվել պարտություններից՝ «Մենք ի վերջո հաղթելու ենք: Չկասկածենք»: Եվ այս հարցում նա կարեւորեց սփյուռքի դերը:

Գերմանահայոց Կենտրոնական խորհրդի ատենապետ **Յոնաթան Շփանգենբերգն** էլ նշեց, որ Արցախում կատարվածը ցեղասպանություն է եւ այս խնդրի միջազգայնացման հարցում մայիսին Երեւանում կայանալիք ԵՄ քաղաքական խորհրդաժողովից առաջ անելիք կա:

Արցախի հարցին անդրադարձան նաեւ այլ բանախոսներ: Շվեյցարիայի Հայկական միությունների խորհրդի նախագահ, Շվեյցարիա-Հայաստան ընկերակցության պատվո նախագահ **Սարգիս Շահինյանը** ներկայացրեց Արցախին նվիրված խորհրդաժողովի տված արդյունքները եւ պատգամավորների միջոցով տարված աշխատանքը, որի արդյունքում ընդունվեց Ադրբեջանի եւ Ղարաբաղի մասին հայտնի որոշումը: Կարեւոր էր նաեւ ԱՄՆ-ից Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հարցերի հանձնախմբի անդամ, իրավաբան **Գառնիկ Գերքոնյանի** ելույթը, որը հստակորեն նշեց , թե ինչու է կարեւոր Արցախի ժողովրդի վերադարձի իրավունքի արծարծումը: Նրա ասելով, եթե չկարողանանք միջազգային հանրությանը ներկայացնել այդ նարատիվը, ապա Սումգայիթի ու Բաքվի ջարդերից սկսած մինչեւ Արցախի հայաթափումը իրենց շարունակությունն են գտնելու Ադրբեջանի ցեղասպանական նոր ծրագրերում:

Եվրոպայի Հայ դատի հանձնախմբի նախագահ **Գասպար Կարապետյանը** ներկայացրեց «Եվրոպացիները հանուն Արցախի» հարթակի կատարած աշխատանքները, որին մաս են կազմում եվրոպական 15 հայկական համայնքների ներկայացուցիչներ: Նրա պատգամն էլ կարեւոր էր, որ անկախ այն հանգամանքից, թե ով է այսօր Հայաստանում իշխանության, իրենք կանգնած են հայոց պետականության եւ երկրի շահերի կողքին: Նույն միտքը արտահայտեց նաեւ IODA նախաձեռնության ընդհանուր քարտուղար, միջազգային իրավունքի մասնագետ **Րաֆֆի Գալֆայանը**, նշելով, որ սփյուռքը պետք է շարունակի ակտիվ աշխատել, առանց նայելու այօրվա կառավարության հետ առկա դժվարություններին: «Արցախի հարցը երկարաժամկետ ծրագիր է, պետք է, որ նոր սերնդին պատրաստենք այդ ուղղությամբ»,- ասաց նա եւ եզրակացրեց. «Եթե Հայաստանի կառավարությունը ձախողված է, ապա սփյուռքը պետք է գործի ինքնավար ձեւով»:

Ի դեպ, որոշ ելույթներում էլ հնչեց, որ թեեւ իրենք պահանջում են Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ընդունում եւ հատուցում, սակայն դա ամենեւին չի նշանակում, որ Հայաստանը չպետք է հարաբերություններ հաստատի Թուրքիայի հետ:

Խորհրդաժողովին ուղերձներ էին հղել Ամենայն Հայոց կաթողիկոս **Գարեգին Բ-ն** եւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս **Արամ Ա-ն**, ինչպես նաեւ ամերիկահայ քաղաքական գործիչ, Գլենդելի քաղաքապետ **Արդի Գասախյանն** ու Ռուսաստանի հայերի միության նախագահ **Արա Աբրահամյանը**: Վերջինիս խոսքը ընթերցեց միության փոխնախագահ **Ավետ Ադոնցը**: Ողջույնի խոսքեր փոխանցեցին նաեւ ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ **Արմեն Ռուստամյանն** ու Ֆրանսահայ կազմակերպությունների համակարգող խորհրդի համանախագահ **Արա Թորանյանը**: Եկեղեցու հարցին անդրադարձ կատարեցին Ֆրանսիայի Հայոց թեմի առաջնորդ **Գրիգոր եպս. Խաչատրյանը**, Լիբանանի թեմի առաջնորդ **Շահե արք. Փանոսյանը**, Կանադայից **Գառնիկ ավագ քահանա Գոյունյանը**, դոկտոր **Սարգիս Մեսրոպյանն** ու ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի ներկայացուցիչ **Իշխան Սաղաթելյանը**: Հիմնական պատգամն էր, որ Հայաստանի իշխանությունների Հայ Առաքելական եկեղեցու դեմ պայքարը իրականում հայ ինքնության եւ հայկական պետականության հիմքերի դեմ է: Հետեւաբար, նաեւ միասնական ուժերով պետք է կասեցնել այդ հարձակումը:

Սփյուռքի խնդիրներին անդրադարձ կատարվեց տարբեր զեկուցողների ելույթներում, որոնցից հատկապես կառանձնացնեի ամերիկահայ գրող, տնտեսագետ եւ ազգային անվտանգության խորհրդատու **Վահան Զանոյանի**, ֆրանսահայ լրագրող եւ քաղաքական վերլուծաբան **Տիգրան Եկավյանի**, Լոս Անջելեսի համալսարանի պրոֆեսոր **Հակոբ Կյուլիճեանի** եւ հայտնի հրատարակախոս եւ «Դը Կալիֆորնիա կուրյեր» թերթի խմբագիր **Հարութ Սասունյանի** ելույթները: Զանոյանի հիմնական պատգամներից էր, որ այնպիսի համաշխարհային լծակներ պետք է մշակել, որ դրանք ուժ հաղորդեն Հայաստանի Հանրապետությանը: Եվ այդ ճանապարհին կարեւոր է հայկական կրթական համակարգի վերաստեղծումը, համաշխարհային հայկական բիզնես ցանցի ստեղծումը, մասնագիտական տեղեկատվական շարժումներն ու նոր տեխնոլոգիաների օգտագործումը, սփյուռքի մշակութային կենտրոններին տեր կանգնելը, համայնքների միջեւ կապերի ստեղծումը եւ այլն: Հակոբ Կյուլիճեանն էլ խոսելով Վռամշապուհ թագավորից մեզ հասած ազգային եւ մշակութային ժառանգության մասին, ներկայացրեց այսօրվա սփյուռքի վիճակը, որ Միջին Արեւելքի հայկական գաղութների դատարկումից հետո սփյուռքը Արեւմուտք է տեղափոխվել, եւ այսօրվա պարագայում կարեւորում է հայկական դպրոցի, լեզվի պահպանության խնդիրը:

Սփյուռքի հայության միայն 4.5 տոկոսն է հաճախում հայկական դպրոցներ: Հարութ Սասունյան էլ առաջարկեց սփյուռքը միավորել մեկ միասնական կառույցի տեսլականով՝ ստեղծելով սփյուռքի ներկայացուցիչներից բաղկացած սփյուռքի խորհրդարան:

Ես որ մասնակցել եմ վերջին 25 տարիներին եվրոպական բոլոր համահայկական ժողովներին ու հավաքներին, կարող եմ միանշանակ ասել, որ այս տարիների ընթացքում մեր մարտահրավերները չեն փոխվել, ավելին՝ դրանք կրկնապատկվել են ավելի լուրջ խնդիրներով: Բայց հայության ինքնության պահպանության, արեւմտահայերենի, իսկ այժմ նաեւ սփյուռքում հայաստանցիների առկայության պարագայում՝ ընդհանրապես հայոց լեզվի պահպանության խնդիրը դարձել է օրախնդիր պահանջ: Սփյուռքի մասնատվածությունը, 44 օրյա պատերազմից հետո ողջ հայությանը համակած անտարբերությունը, Հայաստանի իշխող վերնախավի կողմից տարվող պարտվողական քաղաքականությունն ու անվերջ զիջումների շղթան, մարդկանց լայն զանգվածներին զրկել են հույսից ու հավատից: Եվ այս պայմաններում, իհարկե, շատ դժվար է սփյուռքին զորաշարժի ենթարկել, եթե սփյուռքում գործող կազմակերպությունների միջեւ չլինի համագործակցություն եւ առանց ամբիցիաների նվիրյալ աշխատանք:

Մի հարց հստակ է, որ երկօրյա քննարկումները եւ մտքերի փոխանակումը նոր լիցք հաղորդեցին կազմակերպությունների ներկայացուցիչներին, մտավորականներին եւ անհատ մասնակիցներին, որպեսզի իրենց համայնքներում տարածեն խորհրդաժողովի մասին տեղեկատվությունը: Սակայն կարեւոր մի հանգամանք պետք է հաշվի առնել ապագայում նման հավաքների կազմակերպման հարցում՝ դրանք պետք է ընդգրկեն ավելի լայն խավերի եւ առնվազն սփյուռքում տարբեր ուղղություններ ներկայացնող կարեւոր կազմակերպությունների ներկայացուցիչներին: Այդպիսով կամրապնդվի նաեւ միասնական ցանց ունենալու տեսլականի իրականացումը: Ինչպես խորհրդաժողովի կազմակերպչական մարմնի մյուս համադրող **Տարոն Տեր-Խաչատրյանը** նշեց իր եզրափակիչ ելույթում՝ «Հայաստանը միայն աշխարհագրական տարածք չէ, այն ողջ հայության Հայրենիքն է: Սփյուռքը միայն դիտորդ չէ: Վերանորոգենք մեր ազգային կամքը, ամրապնդենք Հայաստան-Սփյուռք կապը»:

Խորհրդաժողովի ընդունած հայտարարության վերջին մասում մասնավորապես նշվեց. «Համահայկական օրակարգերի նկատմամբ Սփյուռքի միասնականության, հզորացման եւ վերակազմակերպման անհրաժեշտությունն աներկբա է:

Հրամայական է սփյուռքահայության համախմբումը համազգային նպատակների շուրջ, սփյուռքյան կառույցների եւ առհասարակ գործելակերպի արդիականացումը, գաղութների միջեւ ուղղակի համագործակցությունը եւ ներուժի հետեւողական ամրապնդումը: Սփյուռքի վերակազմակերպման գործընթացում հատկապես կենսական է երիտասարդության լիարժեք ներգրավումը: Սփյուռքի զորաշարժը պետք է կատարվի ռազմավարական **ծրագիրների** շուրջ՝ նկատի ունենալով հետեւյալ առաջնահերթությունները.

Աշխարհասփյուռ հայ ժողովրդի եւ Հայաստանի Հանրապետության հզորացում՝ իբրեւ մեկ ազգի երկու բաղադրամասեր: Ազգային պետություն կերտելու գործընթացի սատարում: Հայ Դատի եւ համազգային նպատակների հետապնդում:

Սփիւռքի կենսունակությունն ու հզորությունը անքակտելիորեն կապված են մայր հայրենիքին: Հայաստանի, Արցախի և հայ ժողովուրդի ազգային-պետական շահերը եւ նպատակները անքակտելի են:

Մենք մերժում ենք ՀՀ ներկա իշխանությունների որդեգրած պառակտիչ եւ վանողական մոտեցումները: Փոխարենը, կոչ ենք ուղղում ստեղծելու առողջ, համակարգված եւ հավասարակշռված հարաբերություններ, որոնք միակ երաշխիքն են հզորացնելու հայ ազգը եւ անսասան պահելու հայկական պետականությունը: Համազգային պատասխանատվության գիտակցությամբ, մեր ներուժը պետք է ծառայի բացառապես համազգային նպատակների՝ ապահովելով հայության անվտանգ եւ երաշխավորված ապագան:

Այս նպատակով կարեւորում ենք ՀՀ բոլոր քաղաքացիների՝ անկախ իրենց գտնված վայրից, մասնակցությունը ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին, առ այդ կոչ ենք անում նաեւ Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիներին՝ ներառյալ արտերկրում գտնվողներին, իրենց միջոցներով գնալ Հայաստան եւ մասնակցել ընտրություններին»:

Երկօրյա խորհրդաժողովը հիանալի հանդիսավարեց **Թալին Թաշչյանը**:

Խորհրդաժողովը եզրափակվեց Հայաստանի ու Արցախի օրհներգերի կատարմամբ, որը գլխավորեց ՀՄԸՄ ատենապետ **Զաքար Քեշիշյանը**:

# Բնության դեսպանը. ապրիլի 20-ին լրանում է գեղանկարիչ Հրանտ Թադեւոսյանի ծննդյան 88 տարին

**ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀՀ ժողովրդական նկարիչ **Հրանտ Թադեւոսյանին** (Թաթոսին) մեծ ու փոքր, տարբեր սերնդի արվեստագետներ դիմում են՝ որպես Վարպետի, եւ այդ, իհարկե, ժողովրդական կոչումը նա վաստակել է իր արվեստի որակով, իր անցած ստեղծագործական պատմությամբ, կյանքին ուղղված լավատես եւ իմաստուն հայացքով, մարդկանց հանդեպ բարությամբ եւ հանդուրժողականությամբ, իր օրինակելի աշխատասիրությամբ, բնածին պարզությամբ եւ ազնվությամբ:

Թաթոսի ծննդյան 88-ամյակի առթիվ Երեւանի ճարտարապետության եւ շինարարության ազգային համալսարանի կողմից հրատարակման է պատրաստվել իր գեղանկարչական աշխատանքների նոր պատկերագիրքը, որում ներկայացված են վարպետի տարբեր բնանկարները, նատյուրմորտները, վերացական պատկերներ, կոմպոզիցիոն գործեր եւ այլն: Շուրջ քսան տարի է՝ նա դասավանդում է նույն համալսարանում, բուհի պատվավոր պրոֆեսորն է, 2009-ին արժանացել է Արթուր Թարխանյանի անվ. ոսկե մեդալի եւ Հակոբ Մեղապարտի անվան մեդալի: Տարբեր տարիների Ոսկե մեդալներով է պարգեւատրվել ՀՀ մշակույթի նախարարության (2010), ՀՀ վարչապետի, Երեւանի քաղաքապետարանի (2012) կողմից, բայց ամենից մեծ պարգեւները այն բնածին շնորհն է, ֆանտաստիկ աշխատունակությունը եւ կյանքի սերը, որ ամեն Աստծո օր նրան մղում է վրձին առնելու ձեռքը եւ կտավների վրա գովերգելու կյանքը, բնությունը, հայրենիքը, սերը, եւ այդ սերն իր արվեստով ներարկելու բոլոր նրանց, ովքեր առնչվում են իր արվեստին՝ լինի դա մի պահ, թե մանրակրկիտ դիտում:

Զուր չէ, որ ոչ պաշտոնապես Թաթոսին ճանաչում են՝ իբրեւ «բնության դեսպանի»: Ոնց իր արվեստը, նրա մտքերն էլի բնության մասին են: Նկարում է նրա ամեն մի շնչառություն, ամեն եղանակի եւ օրվա ժամի: Սիրում է շրջել եւ ստեղծագործել հենց բնության գրկում, նկարում է համարյա առանց դադարի, մի շնչով՝ իր հեւքը թողնելով բնության ամեն մի պատկերի վրա: Այդ շնչառությամբ են պատկերված նրա ձերմակ երիցուկները, խոշորաչ կակաչները, դաշտային ծաղիկները՝ բարձր լեռնագոգերում, նոր ծաղկած դեղձենիները, դեղնագլուխ ծաղիկների կղզյակները,- ամենն այս անգամ նաեւ իր ստեղծագործությունների պատկերագրքում: Ամեն պատկեր յուրաքանչյուր դիտողի մոտ ինչ-որ տեղում, հուշ, զգացում է արթնացնում:





Թե մտքերս նվագներով ու հնչյուններով արտահայտելու շնորհն ունենայի, ապա կհնարեի մեղեդիներ՝ արտահայտելու այն զգացմունքերն ու մտածումները, որ ունենում եմ ամեն անգամ՝ Հրանտ Թադեւոսյանի կտավները դիտելիս: Քանզի դրանք ինքնին մեղեդիներ են, խոսքեր, բանաստեղծություններ: Եվ քանի որ ես էլ բառով կերտելուն եմ ունակ, Թաթոսի գործերը հաճախ բանաստեղծությամբ եմ մեկնել: Դեռ 2015-ին լույս տեսած իմ «Արեւալույսի էքսպրոմտներ» գրքում մի ամբողջ բաժին այն բանաստեղծություններն էին, որ ծնվել էին Թաթոսի գործերը դիտելիս ունեցած իմ ապրումներից: Քիչ է ասել՝ դիտել, ըմբոշխնում ես, ըմպում, ներքուստ պարուրվում բնության իր մեկնություններով, խոհական թեմաներով գծագրումներով... Այդ կտավները հետագայում էլ մի քանի տասնյակից ավելի նոր քերթվածքների համար ատաղձ են դարձել: Ահա ծանոթ կտավ՝ Հրանտ Թադեւոսյանի «Կակաչները», որ այսպիսի տողերի ծնունդ են տվել.

***Բռաչափ բացված թերթիկներդ մասունքաման են.***
***ամփոփիր մարմինս նրանում,***



***այսօր իմ սրտին հարվածեցին,***
***մարմինս արյունոտվեց,***
***ամփոփիր քո մեջ թալկացած մարմինս***
***եւ հաշիշներով օրորուն մոռացրու օրվա ցավը...***

Գույն ու ստվերի վարպետ համադրությամբ պատկերված մի այլ կտավ՝ «Դադիվանքը», դարձել է մոտիվ մի այլ բանաստեղծական արարման.

***Ամպը փայլեց, այնքան պարզ էր բիլ երկնքում,***
***Ասես մանուկ մեկն էր արել ջրանկար,***
***Նախորդ գիշեր հորդ Թարթառը ափից ելել,***
***Անձրեւներից խենթացել էր վանքերից վար...***
***Ինձ ասացին, թե խաշնարած ցեղն է վանքում***
***Անձրեւներին պատսպարվել ու աներեր***
***Խարույկներ է վառ ծխացրել՝ աղարտելով***
***Ծաղկողների ձեռամբ արված գիր ու պատկեր:***
***Ես այս մասին պիտի պատմեմ առանց հնար,***
***Ոնց մանուկն էր այն պարզությամբ երկինք ներկել,***
***Ոնց վանքերի ոտների տակ՝ անձավներում,***
***Վանականն էր Երկնքի հետ խաղաղ խոսել...***
***Խաչքարերն են հսկում վանքի մուտքերի մոտ,***
***Իսկ ներքեւում ծառ ու ծաղիկ գետի բերան***
***Առատ, փարթամ ու գունագեղ, ինչպես երբեք,***
***Տարածվել են շատ համաչափ՝ գեղանկար...***



Հրանտ Թադեւոսյանի գեղանկարչական աշխատանքները դիտում եմ բնությանը պատարագման արարին մասնակից դարձածի զգացողությամբ: Դրանք սիրո խոստովանություններ են բնությանը, կյանքի իրավունքի հաստատման գեղանկարչական հռչակագիր, հայրենի բնության նկատմամբ՝ բառով անսահմանելի զգացման արտահայտություններ, գույնով եւ գեղանկարչական արտահայտչականությամբ՝ դիֆերամբ՝ հայոց հողում աճած ծառ ու ծաղկունքին, սարում երեկոյացող օրվա եզրին հեռավոր գյուղատեղիի խաղաղ նինջին, ճերմակ դաշտային ծաղկափնջերին, կյանք ու պայքար խորհրդանշող կարմիր կակաչադաշտերին, մուգ-թանաքով հեղեղուն լեռնալանջերին, մատղաշ դեղձենիների ծաղկման քնքշությանը, բիբլիական լեռանը՝ հայոց հինավուրց պատմության նախավկային...

# 22 էջ հայ արվեստի մասին՝ միջազգային կերպարվեստի հանդեսում




Անցյալ տարի լրացավ Նյու Յորքում հրատարակվող «Սանսթորմ կերպարվեստի հանդեսի» («SunStorm Fine Art Magazine») 50-ամյակը: Այն 1975-ին հիմնել են Վիկտոր եւ Ջեյմի Ֆորբսները: Հանդեսը նվիրված է դասական եւ ժամանակակից արվեստին՝ հրատարակելով հոդվածներ, հարցազրույցներ եւ ներկայացնելով թե՛ ճանաչված, թե՛ նոր արվեստագետների աշխատանքները: Ժամանակի ընթացքում ամսագիրը դարձել է միջազգային հարթակ՝ տարածվելով տասնյակ երկրներում եւ ծառայելով որպես արվեստագետների ներկայացման ու խթանման կարեւոր միջոց:

Հանդեսի կեսդարյա հոբելյանի առթիվ հրատարակվել է հատուկ թողարկում, որտեղ 22 էջ նվիրված է հայ մշակույթին: Շապիկին Լիբանանում, Հայաստանում եւ Կանադայում բնակվող արվեստաբան, Բեյրութի «Նոյյան տապան» պատկերասրահի հիմնադիր տնօրեն, «Սանսթորմ կերպարվեստի հանդեսի» մնայուն աշխատակից **Մովսես Հերկելյանի (Մովսես Ծիրանի)** լուսանկարն է կինոդերասանուհի եւ նկարչուհի **Ջեյն Սեյմուրի** հետ միասին: Ներկայացված են Մովսես Ծիրանիի հոդվածները հայաստանաբնակ նկարիչ **Գեւորգ Եղիազարյանի** («Հավերժական կյանքի էության արձագանքները»), կանադաբնակ արվեստագետ **Պերճ Զաքրճյանի** («Բնության հեշտանքը որպես արվեստի բերկրանքի բեղմնավորություն») եւ «Հիլոզոիստը» (**Արշիլ Գորկու** 120-ամյակի առթիվ») հոդվածները՝ առատ պատկերազարդումներով: Հանդեսում տեղ է գտել նաեւ Մովսես Հերկելյանի՝ 1979 թվականին Արշիլ Գորկու քրոջ՝ **Սաթենիկ Ադոյանի** հետ վարած հարցազրույցը, որն անգլերեն հրատարակվում է առաջին անգամ:

Հանդեսի հայկական բաժինն ավարտվում է խմբագիր **Վիկտոր Ֆորբսի**՝ «Նոյյան տապանի» հիմնադրման 30-ամյակի առթիվ Մովսես Հերկելյանի հետ վարած հարցազրույցով («Նոյյան տապանը» որպես արվեստի տաճար»), դարձյալ մի շարք լուսանկարներով, որոնցում երեւում են ոչ միայն Մովսես Հերկելյանը, այլեւ կինը եւ որդին՝ «Նոյյան տապանի» իր գործակիցներ **Էլո** եւ **Հերակ Հերկելյանները**:

Ավելացնենք նաեւ, որ այս տարի լույս է տեսել նույն «Սանսթորմ կերպարվեստի հանդեսի» ոսկե հոբելյանի ավելի ծավալուն թողարկումը, որի շապիկին, ի թիվս այլոց, տեղ է գտել նաեւ Մովսես Հերկելյանի անունը:



Իրավի, բացառիկ երեւույթ՝ միջազգային հեղինակավոր հարթակում հայ արվեստն ու արվեստագետներին լայնորեն իրազեկելու:

Ա. Բ.

# Լույսի ելեւէջումներ կտավին
## Ռոբերտ Էլիբեկյան - 85

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Լույսը ամեն անգամ նոր պատուհան է բացում մտքերի, ապրումների, հույսերի: Ամեն նոր օր իր գույնն է բերում: Յուրաքանչյուր նկարիչ լույսը թարգմանում է իր ձայնով, մեզ տանում գույնի իր հետքերով:

Ռոբերտ Էլիբեկյանի վրձինը ներդաշնակ է լույսի, նրա տարբեր երեւէջումների հետ, որտեղ նա իր նախընտրած լարերն ունի, երանգների լեզուն: Աշխարհի բազմազանության, բնության հարյուրհազարավոր ձեւերի, մարդկային կյանքի բարդ շարժերի մեջ ո՞ր երեւույթներն են նրան ավելի գրավել, որտե՞ղ է նա սեւեռել հայացքը եւ ինչպիսի՞ն է եղել գեղարվեստական արձագանքն այդ ամենի, ինչպե՞ս ենք թարգմանում նրա կտավների լեզուն` խորհրդավոր խորհրդապաշտակա՞ն, միստիկակա՞ն, թատերայի՞ն: Թերեւս յուրաքանչյուրը տեսնում է համաձայն արվեստի իր ընկալման, իմացության մակարդակի, կա նաեւ զգացողականը: Բայց այն, որ նրա նկարչական արվեստը վաղուց է հանրային ճանաչման, գնահատման ու սիրո արժանացել, փաստ է:




Կտավներին տեսնում ես հոսող գույներ. առաջինը դա է աչքի ընկնում, հետո ֆիգուրները, որոնք գույների աստիճանաբար թափանցիկացող շերտերի միջից երեւում են շղարշավորված: Կտավից կտավ տիրապետող գույները, որոնք հիմնականում մեղմ են, կարմիրը, կապույտը` ավելի ակտիվ, աչքերիդ առաջ այնքան արագ են հերթագայվում, որ մտապատկերներդ շարժանկարի են վերածվում այնպես, որ դրանց վրա կարող ես հյուսել քո պատմությունը, ստեղծել նոր աշխարհ, քոնը, քո սուբյեկտիվը: Կարծես բոլոր կտավները, դրանց պատմությունները շարունակում են միմյանց, այնքան կապված են թվում իրար: Եվ դա այդպես է, դա կյանքն է, մարդու, նկարչի ապրումների, զգացումների հոսքն է, հոգու շարժը` գույնի, գծի, պատկերի ձեւերով անցած կտավին: Դա է, որ հաղորդական, կենդանի է դարձնում նկարչի արվեստը, մտքեր է առաջացնում, երեւակայություն շարժում:





Գեղեցիկ է: Եվ, այո, նկարչի աչքը ամեն անկյունում որոնում է գեղեցիկը, կին, թռչուն, անձրեւ, ծառի մերկացող ճյուղ: Այդ նկարներում դրանք կարող են չնկատվել ուղղակիորեն, նաեւ իբրեւ սիմվոլ չդիտվել. ուշադիր աչքը դա կտեսնի առանձին դետալների մեջ, նկարչի ձեռքը ուղղակի այդ պահի մեջ այդպես է շարժվել:

«Ինչո՞ւ են հոսում այս գույները, հարցնում եմ ինքս ինձ,- ի՞նչ կա թաքնված այս շարժումների մեջ»:

Մի քանի անգամ հանդիպել եմ նկարչին, զրուցել բավական, փորձում էի խոսքի մեջ որսալ ստեղծագործության մոտիվացիան, ի՞նչ է նկարչությունն իր համար, ի՞նչ է արվեստանոցը` յուրօրինակ ապաստարա՞ն. ստեղծագործելու անհրաժեշտությունը ապրելակե՞րպ է, փախո՞ւստ իրականությունից, ինքդ քեզանից, սեփական մտքերի՞ց: Քիչ առաջ արվեստանոց մտած նկարչի հայացքը ի՞նչ է արձանագրել, ի՞նչ է առանձնացրել քաղաքի, իր փողոցի բազում անցուդարձերի մեջ` կանացի հայա՞ցք, դեմք, թաքուն մի ժպիտ, ծառի սպասում, բակի կատուների վա՞զք: Մտապատկերային շարժանկարը կանգ է առնում մի տեղ, գունային հոսքերը խառնվում , ասիմիլացնում են դրանք` աշխարհը մեզ ամբողջության մեջ երեւացնելու: Իհարկե ես հասկանում եմ` որքան սուբյեկտիվ կարող են լինել բոլոր իմ այս ընկալումները:

Կյանքի գաղտնիքներից մեկը գարունն է, ամենասպասվածը,երբ կյանքը նորից թեւեր է առնում,դիպչում մարդկանց սրտերին: Նկարիչը գարնան բույրը, թեթեւությունն ու գեղեցկությունը պատկերում է կնոջ կերպարով: Այդպիսին է Ռոբերտ Էլիբեկյանի կտավներից մեկը` «Գարուն» (1992): Դեռատի կինը` օդի պես թեթեւ սահող գարնանային քամու մեղմությամբ: Կնոջը վերագրվող գաղտնիքներից մեկը` հմայքը, ներկայացվում է թափանցիկ կանաչ ֆոնին` քնքշորեն:

Նկարն ասոցացվում է Բոտիչելլիի «Գարուն», «Վեներայի ծնունդը» կտավների հետ` ոչ կատարման տեխնիկայով, ձեւով, կամ ոճով, այլ էներգիայի թեթեւությամբ, ներքին շնչառության տաքությամբ:

Թատրոնի մոգական աշխարհը.

Էլիբեկյանը թատրոնի, բեմի արվեստագետ է նաեւ, երկար տարիներ է աշխատել այս ասպարեզում, բազմաթիվ բեմական դեկորներ, զգեստներ է ստեղծել, թատերային, բալետային ներկայացումների նկարիչ է:

Թատերական արվեստը իսկապես մեծ ազդեցություն է ունեցել նրա գեղարվեստական մտածողության վրա: Եվ իր նկարչության մեջ իրական կյանքի պատկերներն ու շարժերն էլ որոշակիորեն թատերայնացված են: Նա չի օգտագործում առանձին դեկորներ, սիմվոլներ` ժպիտ, դիմակ եւ այլ, ոչ էլ թատերային հայտնի ծաղրածուանման դեմքեր, նա իրական կերպարներին է տալիս այդպիսի զգացողություն. թատրոնի շունչ կա նրանցում: Գուցե դա է նաեւ պատճառը, որ կյանքի ու բեմի սահմանները կտավի վրա խառնվում են հաճախ, արտիստիզմը թատրոնից դուրս նաեւ կտավներին է հայտնվում, կանայք հիմնականում բեմական կեցվածք ունեն` դիմաշարժով, նվաղուն հայացքներով քողարկված, միրաժային վիճակներում, որի` իմ տպավորությունը ժամանակի մոռացությունն է, պահի կանգ առնելը:

Երեւակայական, տեսիլքային է աշխարհն այս արվեստում, այդպիսին է երեւում կյանքը նրան, նկարում է այն, ինչ ներսի տեսողությունից է գալիս: Բեմի շարժերը` թատերային, ո՞չ դրամատիկը, անցնում են կտավին, եւ այստեղ միտքդ դեմ է առնում անջրպետող, անտեսանելի վարագույրին, ու որքան փորձում ես ետ տանել, մինչեւ վերջ բացել չի լինում: Միրաժային վարագույրը հայտնվում է նկարի ու դիտողի միջեւ, թվում է մոտեցար լուծմանը, սակայն մտքից, աչքից արագորեն չքանում, անհետանում է: Ի՞նչ է հուշում թվացյալ վարագույրը, որ նկարից նկար հայտնվում ու միտքդ հեռացնում է գայթակղիչ գաղտնիքից: Այն, որ ամենը տեսի՞լք է, իլյուզիա՞, խաբկա՞նք իրականության: Գուցե:

Երբ անբացատրելի է մնում նկարը, երբ միտքդ չի որսում պատկերը, հուշել սկսում է գույնը: Նա է զգացմունքի հաղորդիչը, անմիջական կրողը նկարչի հոգու շարժերի, իսկ գույնը զգում ես անգամ ենթագիտակցորեն...

Վարպետի արվեստանոցի մեր մի քանի զրույցներից քիչ բան եմ հիշում, բայց մնացել է զգացողությունը մթնոլորտի. այն ազատ է, բաց, թափանցիկ, նաեւ կանոնիկ:

Լույսը թափանցում է կենտրոնից... Պատերի նկարները, նաեւ ներքեւում պատերին հենվածները իրենց լռությամբ մասնակցում են զրույցին:

Տարիներ, երկար տարիներ առավոտյան դուրս է նա եկել տանից, քայլել ծանոթ փողոցներով դեպի արվեստանոց: Պատկերացնել, իհարկե,հեշտ չէ, թե որքան հույզ ու ապրում, ինչ մտքեր է նա բերել իր հետ, հետո ձեռքը տարել վրձնին, ներկերն ընտրել: Ու գույնը ամեն անգամ յուրովի է արձագանքել իրականությանը, օրվա իր տրամադրությանը` ստեղծելով հարուստ, երեւակայական ու գեղեցիկ աշխարհը էլիբեկյանական նկարչության:

...Լույսն ամեն օր նոր ձեւով է թափանցում ստեղծագործողի հոգու պատուհաններից ներս, սկսումշարժն իր մտազգացական` պահի մեջ, պահի ազդեցությամբ հոսող, փոփոխվող: Այդպես` տարիների մենախոսություն նկարակալի առջեւ, զրույց կտավի հետ, մտերմություն վրձնի հետ:

Եվ ահա կյանքի 85 տարին:

Նոր բացվող ապրիլյան թափանցիկ կանաչի գույն ունի օրն այս:

# Նվարդ Հայթայանի «Չորս արեւը»




Ապրիլի 3-ից 12-ը Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնում կայացավ Նվարդ Հայթայանի «Չորս արեւ» ցուցահանդեսը, որտեղ ցուցադրված էին արվեստագետի վերջին շրջանի գործերը:

Մտնելով սրահ` այցելուն միանգամից շրջապատվում է վառ ու խոսուն գույներով, ինչը ձմեռվա գունային պասիվ ներկապնակից հետո նոր շունչ է հաղորդում արվեստասեր աշխարհին: Շարքը, որը ստեղծվել է արվեստագետի խորհրդածումների, ընդվզումների ու ներքին ապրումների հետեւանքով, խոսում է նրա ներքին ուժի մասին, որն անգամ վերջին տարիների անձնական ու ազգային փորձություններից հետո կարողանում է հանրությանը փոխանցել լուսավորն ու դրականը:

Նվարդ Հայթայանն իր հարուստ ներկապնակի շնորհիվ ներկայացնում է Հայաստանի գեղեցիկ բնությունը` նոր ու թերեւս չտեսնված գույներով: Արվեստագետի «Իմ անուշ հայրենիք» շարքը դրա վառ ապացույցն է: Այս բնապատկերներն արվեստագետի ու բնության միջեւ մի ինքնատիպ երկխոսություն են, որտեղ Հայաստանի տարբեր վայրերի վառ տեսարանները մենք տեսնում ենք արվեստագետի աչքերով: Ուշագրավ է, որ որոշ աշխատանքներ գորգեր են հիշեցնում, ինչը խոսում է մեր բնաշխարհի բազմազանության ու նկարչուհու կողմից դրա ընկալման շնորհի մասին:

Նվարդ Հայթայանի գործերում հեռանկարային շերտադրումները համաչափ ու գրագետ են արված: Յուրաքանչյուր գիծ, յուրաքանչյուր գունային շերտ նպաստում է աշխատանքների համաչափությանն ու դիտորդի կողմից դրանց ընկալմանը: Հատվող հեռանկարները շարունակում են իրար եւ ամբողջացնում հորինվածքը: Արվեստագետի բազում գունախաղերն օժանդակում են աշխատանքների ամբողջականությանն ու դիտորդին ներդաշնակություն փոխանցում:

Հիրավի, Նվարդ Հայթայանի աշխատանքները շոյում են աչքդ ու հոգիդ ջերմությամբ լցնում:

ՀՐԱՉՅԱ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Ջոել Վելդխամփ. «Ճշմարտությունը բարձրաձայնելը մեր առաքելությունն ու պարտքն է»



Ջոել Վելդխամփը մոմ է վառում Դադիվանքում:




Ջոել Վելդխամփը բողոքում է Արցախի շրջափակման դեմ Վաշինգտոնում Ադրբեջանի դեսպանատան մոտ, 27 հունվարի, 2023:

*ԵՐԵՎԱՆ-ՑՅՈՒՐԻԽ - Ջոել Վելդխամփը (ծն. 1988, Այովա) տնօրինում է Շվեյցարիայում հիմնված, կրոնական ազատության եւ աշխարհում հալածվող համայնքների պաշտպանության համար պայքարող «Քրիստոնեական համերաշխություն միջազգային» (այսուհետ՝ ՔՀՄ) իրավապաշտպան կազմակերպության հանրային շահերի պաշտպանության բաժինը: Արժանացել է միջազգային պատմության դոկտորի կոչման Ժնեւի Բարձրագույն միջազգային ուսումնասիրությունների ինստիտուտում, Մերձավոր Արեւելքի ուսումնասիրությունների մագիստրոսի աստիճան՝ Չիկագոյի համալսարանում եւ բակալավրի աստիճան՝ Այովայի Դորդթ համալսարանում: Վելդխամփի գիտական հետազոտությունները վերաբերում են Մերձավոր Արեւելքի նորագույն պատմությանը, ներառյալ Սիրիայի քրիստոնյա համայնքների կյանքը: ՔՀՄ-ում իր գործունեության շրջանակում նա բազմիցս ճանապարհորդել է Մերձավոր Արեւելքում եւ Հյուսիսային Աֆրիկայում՝ փաստագրելով մարդասիրական իրավիճակը եւ զբաղվելով միջազգային շահերի պաշտպանությամբ: Ելույթներ է ունեցել այնպիսի հարթակներում, ինչպիսին է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը՝ անդրադառնալով կրոնական հալածանքներին, տնտեսական պատժամիջոցներին եւ խոցելի փոքրամասնությունների պաշտպանությանը վերաբերող հարցերին:*

*Ի դեպ, Ջոել Վելդխամփի անունը (Ֆելդխամփ ձեւով) եւ լուսանկարը տարբեր անձանց հետ առնվազն երկու անգամ հայտնվել են «Ազգի» էջերում (տե՛ս Անահիտ Հովսեփյան, Բեռնի համաժողովի նպատակը՝ հայացք ԼՂ հակամարտությանը, այն չպետք է վերանա հանրային գիտակցությունից, «Ազգ», 6.06.2025, նույնի, Ադրբեջանի հակահայ ատելության քաղաքականությունը հանգուցալուծում չի գտել, «Ազգ», 17-23.10.2025):*

**-Ջո՛ել, որպես Հայաստանում բնակվող հայ՝ իմ առաջին հարցը հետեւյալն է. ձեր կարծիքով՝ ինչպե՞ս են աշխարհաքաղաքական զարգացումները ձեւավորում մարդասիրական քաղաքականությունը մեր տարածաշրջանում:**

-Ցավոք, Հարավային Կովկասը գտնվում է Ռուսաստանի եւ Միացյալ Նահանգների միջեւ սկսված ազդեցության նոր «մեծ խաղի» կենտրոնում: Նման իրավիճակում մարդասիրական եւ մարդու իրավունքների հարցերը միշտ զիջում են մեծ տերությունների կոշտ շահերին: Մոտ 30 տարի առաջ ազդեցիկ ամերիկացի պետական գործիչ Զբիգնեւ Բժեզինսկին Ադրբեջանը բնութագրել է որպես «աշխարհաքաղաքական հենակետ», որը կարեւոր է ԱՄՆ-ի համար՝ Ռուսաստանի ազդեցությունը զսպելու հարցում: Իրականում ԱՄՆ-ը այսօր էլ տարածաշրջանն այդպիսին է դիտում: Ռուսաստանն էլ, իր հերթին, ակնհայտորեն որոշել է, որ իր ազդեցությունը պահպանելու համար անհրաժեշտ է Թուրքիայի եւ Ադրբեջանի բարյացակամությունը: Երկու կողմերն էլ ունեն Ադրբեջանի կարիքը, եւ այդ պատճառով Ադրբեջանին հիմնականում թույլատրվում է անել այն, ինչ ցանկանում է՝ ներառյալ էթնիկ զտումներ իրականացնելը:

**-Ի՞նչ դեր ունի միջազգային շահերի պաշտպանությունը մարդկային արժանապատվության եւ կրոնական ազատության պաշտպանության գործում:**

-Իհարկե, կոշտ ուժի իրողությունները խիստ սահմանափակում են այն, ինչը կարող է իրականացնել միջազգային շահերի պաշտպանությունը: Բայց դա չի նշանակում, որ պետք է հուսահատվել: Նույնիսկ այն դեպքում, երբ մեծ տերությունները չեն արձագանքում, շահերի պաշտպանությունը կարող է երկարաժամկետ ազդեցություն ունենալ հանրային կարծիքի ձեւավորման վրա:

Լավ օրինակ է այն, որ ընդամենը 20 տարի առաջ գիտական եւ պետական շրջանակներում դեռ զգալի խուսափողականություն կար «Հայոց ցեղասպանություն» եզրույթը գործածելու հարցում: Այսօր այն լայնորեն ընդունված է որպես պատմական իրողություն, եւ միայն սահմանափակ շրջանակներ են այն վիճարկում: Այս փոփոխության հիմքում քաղաքական հաշվարկ չկար: Դա ձեռք է բերվել անցյալ հարյուրամյակի ընթացքում հազարավոր հայերի անձնվեր աշխատանքի շնորհիվ:

Շահերի պաշտպանությունը նաեւ օգնում է մեզ պատրաստվել այն օրվան, երբ տարածաշրջանում աշխարհաքաղաքական իրավիճակը կփոխվի, ինչն անխուսափելի է: Անձամբ ես կարծում եմ, որ թե՛ ԱՄՆ-ը, թե՛ Ռուսաստանը սխալ հաշվարկներ են արել: Նրանցից ոչ մեկի շահերից չի բխում, որ Հայաստանը լիովին զրկվի իր ինքնիշխանությունից, եւ որ Թուրքիան ու Ադրբեջանը լիովին վերահսկեն տարածաշրջանը: Սակայն նրանց քաղաքականությունը հենց այս իրավիճակին է հանգեցրել: Վերջիվերջո, Ադրբեջանը (որն աշխարհին ներկայանալու իր ողջ ջանքերով հանդերձ շարունակում է մնալ պարանոյիկ, ծայրահեղ ազգայնական եւ ագրեսիվ բռնապետություն), կդառնա չափազանց դժվար կառավարելի, եւ մեծ տերությունները կսկսեն փնտրել նրան սահմանափակելու ուղիներ: Այդ ժամանակ մենք պետք է պատրաստ լինենք, որ Արցախի հայերի վերադարձի իրավունքը լինի օրակարգի կենտրոնում: Նման բան արդեն տեսել ենք: ՔՀՄ-ն յոթ տարի շարունակ ահազանգում էր Սուդանում ցեղասպանության եւ ստրկության մասին, մինչեւ որ 2002 թվականին ԱՄՆ-ը որոշեց միջամտել եւ նպաստել քաղաքացիական պատերազմի ավարտին: Մենք չէինք կարող վերահսկել այն աշխարհաքաղաքական փոփոխությունները, որոնք հանգեցրին այդ որոշմանը, բայց երբ դրանք տեղի ունեցան, մեր շահերի պաշտպանությունը նպաստեց քաղաքականության ձեւավորմանը:

**-Ձեր կարծիքով՝ այսօր գլոբալացված աշխարհում դեռ կարելի՞ է խոսել քրիստոնեական համերաշխության մասին: Նույնիսկ Եվրոպայում, որը շվեյցարա-իսրայելցի հեղինակ Բա Եորն անվանում է «Եվրաբիա», թվում է, թե իրական քրիստոնեական արժեքները մարում են:**

-Քրիստոնեական համերաշխությունը այսօր, անկասկած, աշխարհաքաղաքական իրողություն չէ: Հալածանքների ենթարկվող կամ զրկանքների մեջ գտնվող քրիստոնյաները գրեթե ոչ մի դեր չեն խաղում արեւմտյան պետությունների արտաքին քաղաքականության մեջ: Սա կտրուկ հակադրվում է 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի իրավիճակին, երբ Օսմանյան կայսրությունում քրիստոնյաների վիճակը կենտրոնական թեմա էր ամերիկյան ու եվրոպական քաղաքականության մեջ: Մենք չենք ակնկալում, որ հարցը մոտ ապագայում կփոխվի:

ՔՀՄ-ի համար քրիստոնեական համերաշխությունը նախ եւ առաջ հոգեւոր կոչում է: Մեր առաքելությունն է՝ միավորել աշխարհի քրիստոնյաներին՝ աջակցելու հալածվող քրիստոնյաներին եւ հալածվող այլ ժողովուրդներին, ինչպիսիք են, օրինակ, Իրաքի եզդիները կամ Մյանմայի ռոհինջա մահմեդականները: Մեր աջակիցներից շատերը հարուստ կամ քաղաքականապես ազդեցիկ չեն, բայց միասին մենք կարող ենք օգնել այդ համայնքներին գոյատեւել ու երբեմն նույնիսկ՝ արմատապես փոխել իրենց վիճակը: Թեեւ ապրում ենք կայսրություններով, գերտերություններով եւ ազգային պետություններով պայմանավորված աշխարհում, սակայն Հիսուս Քրիստոսի միջոցով Աստված մեզ միավորել է մկրտության եւ Սուրբ Հոգու շնորհիվ՝ հաղթահարելով ազգության, լեզվի, սեռի եւ դասի բաժանումները: Մենք միասին Քրիստոսի Մարմինն ենք աշխարհում: Քրիստոնեական համերաշխությունն այն գործիքն է, որը Նա տվել է մեզ՝ դիմակայելու ճնշմանը եւ հալածանքներին: Պետք է օգտվենք դրանից:

**-Կարծում եմ՝ առաջին անգամ հայերի հետ ծանոթացել եք Սիրիայի քրիստոնյա համայնքներն ուսումնասիրելիս: 21-րդ դարը հատկապես ծանր եղավ Մերձավոր Արեւելքի հայկական համայնքների համար, որոնց թվաքանակը կտրուկ նվազեց: Ձեր կարծիքով, որո՞նք են այսօր այդ տարածաշրջանի քրիստոնյա համայնքների առջեւ կանգնած ամենամեծ մարտահրավերները: Այնտեղ ապագա տեսնո՞ւմ եք արդյոք քրիստոնեության համար, թե՞ կիսում եք ավելի հոռետեսական տեսակետը, ըստ որի, այն կարող է անհետանալ:**

-Մերձավոր Արեւելքում կայսրություններից դեպի ազգային պետություններ անցումը խորապես տրավմատիկ է եղել քրիստոնյաների համար: Ավանդաբար նրանք իսլամական կայսրություններում ունեին պաշտպանված, բայց երկրորդ կարգի կարգավիճակ՝ որպես դհիմմիներ: Ջավեշական կերպով, դհիմմի համակարգի վերացումը դարձավ երկակի կորուստ քրիստոնյաների համար. այն նրանց դարձրեց խոցելի թե՛ կրոնական ծայրահեղականների, թե՛ թուրք եւ արաբ ազգայնականների հարձակումների նկատմամբ, մինչդեռ նրանց հավասար քաղաքացի դարձնելու փորձերն այդ հանրությունները մեծապես մերժել են:

Այսօր, գրեթե քառորդ դար շարունակվող պատերազմներից հետո, Թուրքիան կարծես պատրաստվում է դառնալ տարածաշրջանի գերիշխող ուժը: Սա շատ վատ նորություն է քրիստոնյաների համար. վերջին 103 տարիների ընթացքում այնտեղ, որտեղ Թուրքիայի Հանրապետությունը տարածել է իր ազդեցությունը՝ Անտիոքից մինչեւ Կիպրոս, պատմական քրիստոնյա համայնքները վերացել են:

Քրիստոնեությունը, անկասկած, կարող է անհետանալ Մերձավոր Արեւելքից: Սակայն դա չպետք է ընդունենք որպես անխուսափելիություն: Եթե կա մի վայր, որը կարելի է անվանել հուսահատական քրիստոնյաների համար, ապա դա Սիրիան է՝ 15 տարվա քաղաքացիական պատերազմից ու տնտեսական պատժամիջոցներից ավերված եւ ջիհադիստական ուժերից կազմված վարչակարգով կառավարվող: Բայց հենց Սիրիայում ենք տեսնում, որ բազմաթիվ քրիստոնյաներ, նրանց մեջ՝ հայերը, շարունակում են հավատարիմ մնալ իրենց հայրենիքին եւ համաքաղաքացիներին՝ վճռական լինելով ապրել իրենց մահմեդական հարեւանների հետ որպես համաքաղաքացիներ: Նրանք արժանի են մեր լիակատար աջակցությանը:

**-Դուք այն քիչ ոչ հայերից եք, որոնք հետեւողականորեն գրում են Արցախի էթնիկ զտման մասին: Ի՞նչ նշանակություն ունի Հայաստանը ձեր հետազոտական եւ հանրային գործունեության մեջ:**

-Ինձ համար բարեբախտություն է եղել այս տարիների ընթացքում բազմիցս լինել Հայաստանում: Առաջին անգամ այստեղ եկա 2017 թվականին՝ իմ դոկտորական ծրագրի շրջանակում հայերեն սովորելու նպատակով: Ցանկանում էի գրել Հալեպի քրիստոնյաների մասին, եւ բավական ուշ հասկացա, որ նրանց մեջ որքան շատ են հայերը: Դա կարեւոր դաս էր ինձ համար. հայերը քրիստոնեության պատմության անբաժանելի մասն են ոչ միայն Սիրիայում, այլեւ Մերձավոր Արեւելքում եւ ամբողջ աշխարհում:

Ահա թե ինչու ՔՀՄ-ն այսքան մեծ ուժ է ներդնում այս գործում: Հայաստանն առաջին քրիստոնյա պետությունն է: Նրա մշակույթը, աստվածաբանական ավանդույթը եւ հավաքական հիշողությունը համաշխարհային քրիստոնեական ժառանգության անփոխարինելի մասն են: Հայ ժողովուրդը վերապրել է պատերազմներ, պետականության բացակայություն, ցեղասպանություն, կոմունիստական ամբողջատիրություն եւ այլ փորձություններ, եւ այսօր էլ շարունակում է պահել Ավետարանի լույսը աշխարհի այս՝ աստիճանաբար թշնամական դարձող հատվածում: Արեւմուտքը կանգնած է այդ ամենը «մի գավաթ ապուրի» դիմաց փոխանակելու վտանգի առաջ: Եթե Հայաստանն անհետանա, մեր ապագա բոլոր պայքարները շատ ավելի դժվար կլինեն:

⇨7

# Ինչպե՞ս կարող է ընդունվել օրինախախտ նախընտրական ծրագիրը

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Ըստ ընդունված արարողակարգի եւ սահմանադրական սովորույթի, Հայաստանի Հանրապետության նոր ընտրվող նախագահը պաշտոնը ստանձնելիս երդվում է՝ ձեռքը դնելով Սուրբ գրքի եւ երկրի Սահմանադրության վրա: Պաշտոնական տեքստի համաձայն երդվում է, ի մասնավորի, գործել բացառապես Սահմանադրության եւ օրենքների շրջանակում: Այն պետական պաշտոնյաները, սկսած վարչապետից մինչեւ պաշտոնեական սանդուղքի ամենաներքեւում գտնվողը, որոնք նման երդում չեն տալիս, միեւնույն է, իրավունք չունեն եւ չեն կարող գործել երկրի Սահմանադրությանն ու օրենքներին հակառակ: Նույնը եւ՝ հանրապետությունում ամեն քաղաքական, հասարակական եւ այլ կազմակերպություն ու հաստատություն, ամեն քաղաքացի: Առավել եւս չեն կարող հակասահմանադրական ու հակաօրինական դրույթ ներառել իրենց նախընտրական ծրագրերում:

ՀՀ ներկա վարչախմբի կողմից Ամենայն Հայոց կաթողիկոսի եւ ըստ էության՝ վաղուց արդեն հենց Հայ Առաքելական եկեղեցու դեմ ծավալված, ազգային այդ ինստիտուցիոնալ հենասյուն-կառույցի պառակտմանն ու թուլացմանը ծառայող հետեւողական արշավը սկզբում գուցե կարելի էր վերագրել, ասենք, վարչապետի ժամանակավոր քինախնդրությանն ու քմահաճույքին: Բայց ժամանակը ցույց տվեց, որ դա նրա եւ իր ղեկավարած կառավարության կողմից հատուկ որդեգրած քաղաքականություն է՝ ի հակառակ ու ի խախտումն ՀՀ Սահմանադրության եւ օրենքների... Այս մասին բավականաչափ ասվել, խոսվել է, երեւի կրկնելու հարկ չկա: Էլ չենք ասում խնդրի բարոյական եւ այլ կողմերի մասին:

Այսօր մարդիկ հիշեցնում են անցյալ տարի Թուրքիայում պոլսահայերի հետ հանդիպմանը **Նիկոլ Փաշինյանի** խոսքերը (յութուբյան տեսանյութը կա). «Հայաստանի վարչապետը աշխարհի բոլոր հայերի պատասխանատուն չի...» եւ այլն: Իսկ ինչպե՞ս կարող է միայն Հայաստանի չորս թե հինգ տարով ընտրվող հերթական վարչապետ-պատասխանատուն իրեն վերապահել աշխարհի բոլոր հայերի մայր Եկեղեցու ներքին կյանքին կամայականորեն միջամտելու եւ ցկյանս ընտրված Ամենայն Հայոց, այսինքն դարձյալ բոլոր հայերի կաթողիկոս փոխելու առնվազն անհասկանալի «իրավունքը», արհամարհելով նաեւ գործող կարգն ու վիրավորելով համայն հավատավոր հայության զգացմունքները: Բազմաթիվ միջազգային, համազգային, տեղական կրոնական եւ այլ կառույցներ, գործիչներ աշխարհի տարբեր ծայրերից խստորեն քննադատել ու դատապարտել են այս արշավը: Միայն վերջերս, ինչպես հաղորդվում է, ընդդեմ այս արշավի, Հայ Առաքելական եկեղեցու եւ նրա գահակալի պաշտպանության ցույցեր են



տեղի ունեցել Ռուսաստանի 48 քաղաքներում, նաեւ ԱՄՆ-ում, Վրաստանում, Ուզբեկստանում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Ռումինիայում: Ապրիլի 11-12-ին Փարիզում, Հայաստանից եւ Սփյուռքի 26 երկրներից ժամանած 150 հեղինակավոր ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած՝ Սփյուռքի ազգային զորաշարժի խորհրդաժողովը հայտարարությամբ է հանդես եկել, կարեւորել ազգային արժեքների եւ Հայ եկեղեցու դերը սփյուռքում հայկական ինքնության պահպանման հարցում: Ու այս ամենը՝ ձայն բարբառո հանապատի...

Եվ ահա հաջորդ, ասես հենց *ինադու* եւ մարտահրավեր քայլը: Իր երեւույթով պարզապես ապշեցնող: Իշխող քաղաքական ուժի, իմա՝ գործող պետական իշխանության նախընտրական ծրագրում, որը թվում է՝ պետք է սահմանադրականության եւ օրինականության տառին համապատասխանության օրինակ ծառայեր, ներառված են դրույթներ Եկեղեցու գործող կարգին միջամտելու (կանոնադրության ընդունում, բարեփոխության կառուցակարգեր), կաթողիկոսի, իրենց արտահայտությամբ՝ «Եկեղեցու փաստացի պետի...» «հեռացում» (սա՞ է «բարեփոխությունը»), Կաթողիկոսական տեղապահի, Կաթողիկոսի ընտրություն... Մարդ չի ուզում կարդացածին հավատալ:

Սա, այս «պարտադրվող օրակարգի ամրագրումը», ինչպես հանգիստ եւ սպառիչ ասվում է Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հայտարարության մեջ, «սահմանադրական կարգի, Եկեղեցու ինքնակառավարման իրավունքի, ինչպես նաեւ խղճի ու կրոնի ազատության միջազգային հիմնարար սկզբունքների բացահայտ ոտնահարում է»: Խիստ որակումներով ու պահանջով հայտարարությամբ է հանդես եկել նաեւ Հայոց եկեղեցու պաշտպանության համահայկական խորհուրդը:

Դժվար է կարծել, թե ՔՊ նախընտրական ծրագրի թելադրողներն ու հեղինակները չգիտեն համապատասխան սահմանադրական դրույթները եւ նշված հիմնարար սկզբունքները: Ուրեմն որեւէ մեկը կարող է իրեն Սահմանադրությունից վե՞ր դասել:

Թվում է՝ կա՛մ կառավարող ուժն այնուամենայնիվ պետք է իր նախընտրական ծրագրից հեռացնի այդ դրույթները, կա՛մ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պետք է մերժի նման ծրագիրն ու քաղաքական ուժին չգրանցի ընտրություններին մասնակցության համար: Այլապես մեղսակցության եւ մի օր օրինազանցության համար պատասխանատվության խնդիր կառաջանա: Իսկ այն ընտրողները, որոնք գիտակցաբար կամ թեկուզ չիմացաբար կքվեարկեն նման ծրագրի օգտին, կխրախուսեն եւ դուռ կբանան հետագա նորանոր անօրինականությունների ու մենիշխանական կամայականությունների համար:

Եվ վերջինը՝ որպես ընտրող ՀՀ մի քաղաքացու կարծիք: Հայաստանում փաստացի իշխող քաղաքական ուժին ընտրություններում մերժելու բազմաթիվ պատճառներ կան: Բայց դրա համար, այլ մի քանիսի նման, այս մեկն էլ բավական է:

# Ջոել Վելդքամփ. «Ճշմարտությունը բարձրաձայնելը մեր առաքելությունն ու պարտքն է»

⇨6 Ամեն անգամ Հայաստան գալուց հետո ես հեռանում եմ ներշնչված: Իհարկե, ոչ թե ծանր քաղաքական իրավիճակից, այլ մեր բազմաթիվ հայ գործընկերների քաջությունից, որոնք շարունակում են պայքարել դժվարին պայմաններում: Նկատի ունեմ մարդու իրավունքների այն պաշտպաններին, որոնք շարունակում են ճշմարտությունը բարձրաձայնել աճող ամբողջատիրության պայմաններում, եւ Արցախի այն փախստականներին, որոնք կորցրել են ամեն ինչ, բայց ամեն օր աշխատում են իրենց հայրենակիցներին օգնելու եւ հույսը պահպանելու համար: Երբ հանդիպում ես նման մարդկանց, անհնար է չցանկանալ ավելի շատ աշխատել նրանց աջակցելու համար:

**-Խոսենք Հայաստանի վերջին զարգացումներից: Շատերը ողջունում են TRIPP-ը, մինչդեռ մյուսները այն դիտում են որպես ծուղակ: Ի՞նչ կարծիքի եք դուք:**

-Հավանաբար ես ամենահարմար անձը չեմ այս հարցի մասին խոսելու համար. ես մեծապես վստահում եմ այնպիսի փորձագետների, ինչպիսիք են Ֆիլիպ Գալֆայանը եւ Տիգրան Գրիգորյանը, որոնց վերլուծությունները համարում եմ օգտակար: Սկզբունքորեն, Հայաստանի համար կարող է շատ շահավետ լինել Եվրոպայի եւ Ասիայի միջեւ առեւտրային հանգույց դառնալը եւ այդ ուղղությամբ սերտորեն համագործակցել ԱՄՆ-ի հետ՝ պայմանով, որ պահպանի ինքնիշխանությունը սեփական տարածքի եւ սահմանների նկատմամբ:

Ինձ մտահոգում է այն, որ Հայաստանի որոշ պաշտոնյաներ խոսում են այնպես, կարծես TRIPP-ն ինքնին կարող է զսպել ադրբեջանական ներխուժումը: Թվում է, թե ենթադրությունն այն է, որ եթե ԱՄՆ-ը մեծապես ներգրավված լինի այս նախագծում, ապա Ադրբեջանը կխուսափի հարձակվել Հայաստանի հարավի վրա: Ես դա համոզիչ չեմ համարում: Ամերիկյան քաղաքականությունն անկայուն եւ փոփոխական է: Հարավային Կովկասում ԱՄՆ քաղաքականության միակ կայուն գիծը 1990-ականներից ի վեր եղել է Ադրբեջանի հետ համագործակցությանն առաջնահերթություն տալը: Բաքուն համոզված է, որ քանի դեռ օգնում է Վաշինգտոնին իր էներգետիկ եւ անվտանգության նպատակներում, հայերի դեմ իր բոլոր գործողությունները կներվեն եւ արագ կմոռացվեն: Սա այն դասն է, որը նա քաղել է 2016, 2020, 2022 եւ 2023 թվականների իրադարձություններից:

Եթե ԱՄՆ-ը ցանկանում է զսպել Ադրբեջանի ապագա ագրեսիան, ապա պետք է պատասխանատվության ենթարկի Ադրբեջանին նախկին գործողությունների համար եւ պահանջի փոխհատուցում: Հայերը չպետք է հանգստանան ու գոհանան ավելի քչով:

Ինչ վերաբերում է վերջին զարգացումներին, կասեմ հետեւյալը. Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի պատերազմը մեծ անվտանգային ազդեցություններ կունենա Հայաստանի համար, որոնք, ցավոք, այժմ գրեթե անհնար է կանխատեսել: Բայց պատերազմը կրկին ընդգծում է, թե որքան փոփոխական է ԱՄՆ-ի քաղաքականությունն այս տարածաշրջանում: Ամերիկացիները պատրաստ են վարել հսկայական, անվերջ պատերազմ՝ առանց նախազգուշացման, ինչը հանգեցրել է Իրանի գրոհներին տարածաշրջանի նրանց գրեթե բոլոր դաշնակիցների նկատմամբ: Այն գաղափարը, որ հայերը կարող են հույս դնել ԱՄՆ-ի ներդրումների վրա TRIPP-ում, որպեսզի ագրեսիայից ապահով լինեն, թվում է, ավելի անշահավետ է, քան երբեւէ: Հստակ է, որ Հայաստանը պետք է լավ հարաբերություններ ունենա ԱՄՆ-ի հետ, սակայն հայերը չպետք է իրենց պաշտպանության մեջ հույս դնեն ԱՄՆ-ի վրա:

**-Ջո՛ել, նշեցիք, որ սովորել եք հայերեն: Ինչպիսի՞ն էր այդ փորձառությունը:**

-Շատ խոնարհեցնող: Ես սովորել եմ ֆրանսերեն, գերմաներեն եւ արաբերեն, բայց հայերենը դրանցից ավելի դժվար էր: Ի վերջո սովորեցի այնքան, որ կարողանամ կարդալ 1920-ականների հայկական աղբյուրները, եւ կարողանում եմ, թեկուզ թույլ, խոսել պարզ թեմաների շուրջ, բայց դա դեռեւս այն լեզուն չէ, որի հետ ինձ հարմարավետ եմ զգում: Բարեբախտաբար, իմ հայ ընկերներն ու ուսուցիչները միշտ մեծ համբերություն են ցուցաբերում: Ես դեռ ամեն շաբաթ առցանց դասեր եմ ստանում Հայաստանում ապրող մի ուսուցչից (ողջո՜յն, Գեւո՛րգ) եւ ուզում եմ կատարելագործվել, բայց, կարծում եմ, սա մարտահրավեր է լինելու ամբողջ կյանքի համար:

**-Վերջում՝ շնորհակալություն ձեր ողջ աշխատանքի համար, հատկապես հայերի շահերի պաշտպանության ուղղությամբ: Այսօր ճշմարտության ձայնը բարձրացնելը հազվադեպ երեւույթ է, եւ ձեր նման մարդկանց ջանքերը մեծ նշանակություն ունեն:**

-Շնորհակալ եմ քաջալերանքի համար: Ինձ եւ իմ գործընկերներին այս գործը վստահել են Եվրոպայում եւ Միացյալ Նահանգներում ապրող հազարավոր սովորական քրիստոնյաներ, որոնք իրենց նվիրատվություններով հնարավոր են դարձնում մեր գործունեությունը: Մեր շնորհակալությունն առաջին հերթին ուղղված է նրանց: ՔՀՄ-ի համար ճշմարտությունը բարձրաձայնելը մեր առաքելությունն ու պարտքն է: Եթե մենք չխոսենք հալածանքների մասին (անգամ երբ դա հակասում է գերիշխող խոսույթին), ապա մեր գոյությունը որեւէ իմաստ չի ունենա...

# Փաշինյանը «եկեղեցու պառակտումը» ներառել է իր կուսակցության նախընտրական ծրագրում

## *«Եկեղեցին հավատացյալներին խաղաղ դիմադրության կոչելու իրավունք ունի»*

***Ռուսական «Մոսկովսկի կոմսոմոլեց» լրատվականի ապրիլի 13-ի այս հրապարակումը թարգմանաբար ներկայացնում ենք կրճատումներով:***

Ապրիլի 12-ին Էջմիածնում, Հայաստանի թեմերի երիտասարդ ուխտավորների հետ հանդիպման ժամանակ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը հայտարարեց երկրի իշխանությունների կողմից եկեղեցու վրա աննախադեպ ճնշումների մասին: Նա հակասահմանադրական անվանեց եկեղեցու բարեփոխման «Քաղաքացիական պայմանագրի» պլանները, որոնք իշխող կուսակցությունը ներառել է իր նախընտրական ծրագրում: Հրապարակված փաստաթղթում առաջարկվում է Հայ Առաքելական եկեղեցու ներկայիս ղեկավարի հեռացում, տեղապահի ընտրություն, նոր կանոնադրության ընդունում եւ նոր Կաթողիկոսի ընտրություն:

...Փաշինյանի կառավարության առճակատումը Հայ Առաքելական եկեղեցու հետ մտնում է նոր փուլ: Արդյոք նախկինում եղե՞լ են նախադեպեր, որ որեւէ քաղաքական կուսակցություն եկեղեցու պառակտման պլաններ մտցնի իր նախընտրական ծրագրում: Մենք այս թեման քննարկեցինք ԱՊՀ երկրների ինստիտուտի Ռուս ուղղափառ եկեղեցու հետ կապերի բաժնի ղեկավար **Կիրիլ Ֆրոլովի** հետ:



- Կուսակցության ծրագրում եկեղեցու պառակտում ներառելը իսկապես ինչ-որ նոր բան է, աննախադեպ իրողություն, համաշխարհային պրակտիկայում նման բան չկա, - կարծում է փորձագետը:- Այստեղ **Փաշինյանը** գերազանցել է անգամ **Զելենսկուն**: Զելենսկին իր «Ժողովրդի ծառա» կուսակցության ծրագրերում եկեղեցու պառակտում չի ներառել, չնայած նա ստեղծում է այն՝ հետեւելով **Պորոշենկոյին**... Ես տեսնում եմ միայն մեկ պատմական նմանադեպ: Փաշինյանը գնում է Լենինի եւ Տրոցկու հետքերով, որոնք կազմակերպեցին պատրիարք Տիխոնի հեռացման եւ Ռուս ուղղափառ եկեղեցու ղեկավարության փոփոխության նորացումային պառակտումը: Փաշինյանն այժմ նման «նորացումային» պառակտում է անում Հայ Առաքելական եկեղեցում: Մեթոդներն էլի նույնն են: Հարցն այն է, թե արդյո՞ք այս համարը կանցնի:

**- Դուք ի՞նչ եք կարծում, կանցնի՞:**

- Ամեն ինչ կախված է Հայ Առաքելական եկեղեցուց ու հավատացյալներից: Որովհետեւ այս տեսակի ճնշումը միշտ մոբիլիզացնում է կողմնակիցներին: Հիշենք, որ պատրիարք Տիխոնը, ինչքան էլ ուժեղ էր բոլշեւիկների ճնշումը, չնայած բոլոր հալածանքներին, կանգուն մնաց: Հիշեցնեմ նաեւ, որ Ռուս ուղղափառ եկեղեցու նորացումային պառակտումը 1920-ականներին պաշտպանվել էր Կոստանդնուպոլսի պատրիարքության կողմից: Եթե Գարեգին Բ-ն այժմ զինվի Սուրբ պատրիարք Տիխոնի փորձով, այդպիսի պառակտման դեմ Ռուս եկեղեցու պայքարի փորձով, նա կհաղթի: Բայց այն, ինչ արել է Փաշինյանը՝ պառակտման պլանները ներառելով իր կուսակցության նախընտրական ծրագրում, նման բան նույնիսկ բոլշեւիկները չեն արել: Նրանք ունեին միայն աթեիզմի ընդհանուր գաղափարներ: Այո, պառակտումներ ստեղծելու պրակտիկա նրանք ունեին, բայց դա չէր ներառվում կուսակցության ծրագրում: ՀամԿ(բ)Կ ծրագրերում գրառվում էր միայն աթեիզմը, այլ ոչ թե եկեղեցական պառակտում ստեղծելը:

Թարգմանեց Գ. ՄԿՐՏՉՅԱՆԸ

# Ընդդիմադիր եւ իշխանական պատրանքներ

⇨1 Իսկ Սամվել Կարապետյանի կալանքն ու նրա շուրջ իրավական քաշքշուկն, ընդհակառակը, նպաստում են Կարապետյանի վարկանիշի բարձրացմանը: Եւ քաղտեխնոլոգիաներին հիանալի տիրապետող, անգամ խոհանոցներում շշնջացող մարդկանց խոսույթից տեղյակ ուժային կառույցներ ունեցող իշխանությունը չի կարող չպատկերացնել իր գործելակերպի ազդեցությունը հատկապես վերջին առումով: Մանավանդ՝ ժամանակից շուտ սկսած ընտրարշավը, որպես կառավարության ղեկավարի՝ մարզերում քարոզչական գործունեություն ծավալումը եւս իշխանությանը չսիրողներին նյարդայնացնում է, նպաստում այլընտրանքային հայացքի ձեւավորմանը:



Մնում է ենթադրել, որ իրականություն է դառնում բոլորից վաղ մեր կողմից կանխատեսված ընդդիմափոխությունը, եւ իշխանությունը խորհրդարան անցնելու գլխավոր ֆավորիտ, կամա, թե ակամա, հասկանալով , թե չէ, փորձում է դարձնել Սամվել Կարապետյանի ձեւավորած դաշինքը: Հավանաբար այլ չերեւացող գործընթացներ կան այս առումով, որ շուտով հայտնի կդառնան, ու այս բոլորով հանդերձ՝ իշխանության նյարդայնությունն այլ պատճառով է:

Տեսականորեն հնարավոր է 2018-ի կրկնությունը, երբ **Սերժ Սարգսյանը** վստահ էր, որ փողոցում կատարվողն ընդամենն ընդդիմության նոր շերտի մուտք է նշանակելու խորհրդարան, բայց ինչ-որ պահի կորցրեց վերահսկողությունը գործընթացների հանդեպ եւ իշխանությունը, ու սա կրկնելու գայթակղությունը ընդդիմության երեք մեծ միավորները (Փաշինյանի բնութագրմամբ՝ եռագլուխ նախկիններ) կարող են ունենալ: **Իշխան Սաղաթելյանը** «Հայաստան» դաշինքից հենց դա էր ասում, թե պետք է մի կողմ դնել տարաձայնությունները եւ միասնաբար գնալ ընտրություններին:

Բայց մեր կարծիքով դա հնարավոր չէ՝ երեք հիմնական ուժերի առաջնորդների հավակնությունների, վարչապետի սեփական թեկնածուների նրանց պատկերացումների, հին նեղացածությունների եւ տարբեր շահերի պատճառով, որքան էլ նրանք աշխարհաքաղաքական նույն ուղղվածության լինեն: Մանավանդ՝ **Նիկոլ Փաշինյանը** հենց մեկ օր առաջ խորհրդարանում ասում էր, թե ոչ մեկին չի հաջողվի կռվեցնել Հայաստանի եւ ՌԴ իշխանություններին, թե բա՝«Մենք չենք վիճել ու չենք վիճելու ՌԴ-ի հետ»:

Բացի այդ իշխանությունը վերջին շրջանում այնպիսի հանրահաճո քայլեր է արել, որ դրանց ազդեցությունը չի կարող չեզոքացնել եւ ոչ մի ընդդիմություն՝ նրա տարբեր թեւերը փողի բույրը, թե ազգային գաղափարների խոսույթը կիրառեն: Նկատի ունենք առողջապահության ապահովագրության ծրագրի գործարկումը (դուք դեղատներում անվճար դեղ ստանալու եւ հիվանդանոցներում անվճար ծառայությունների հերթերը նայեք), իր թերություններով հանդերձ: Բանակում ծառայության ոլորտում փոփոխությունները, վիզաների ազատականացման խոստումները, գյուղական բնակավայրերում պարզ մարդկանց հետ շփվելու ձեւաչափերը նկատի ունենք: Մայիսի սկզբին գումարվելիք ԵՄ երեւանյան գագաթնաժողովի քարոզչական հետագիծը: Այս կարգի բաները անտեսել չի կարելի, չնայած համաձայն ենք այն կարծիքի հետ, որ ներկա իշխանությունն այդպես էլ չկարողացավ մտավորական շերտերի հետ շփման եզրեր գտնել, որոնք, բնականաբար, ընդդիմախոսում են իշխանությանը ե՛ւ Արցախի, ե՛ւ Եկեղեցու շուրջ տեղի ունեցածի, գերիներին Բաքվում մոռացության մատնելու եւ մյուս հանրահայտ թեմաներով:

Բայց ընտրելու են պարզ մարդիկ, ու, բնականաբար, պետք է արձանագրել իրողությունները, ոչ թե ընդդիմադիրների ցանկություններն ու երազանքները, մանավանդ որ նրանք, ներկա իշխանության հետ միասին, ամեն ինչ արեցին, որ չառաջանան նոր, անցյալն ու ներկան պատմության գիրկն ուղարկող իրական այլընտրանքային ուժեր, ու այդ ծանր գործը մնաց առաջիկա տարիներին:

Չնայած տարածաշրջանում կարող են դեռ լինել ֆորս -մաժորներ, որոնք կարող են փոխել նաեւ մեր ներքին իրողությունները:

Բայց որ իշխանությունը կարող է աջակցություն ստանալ համայնքային բնակչությունից, թոշակառուներից, զինծառայողների զգալի հատվածից՝ դա հնարավոր չէ նկատի չառնել:

Թեեւ ԿԸՀ-ն արդեն ստացել է Արման Թաթոյանի «Միասնություն թեւերի» հայտը, բայց ամեն ինչից պարզ է, որ Թաթոյանի, Մարուքյանի եւ մյուս ավելի փոքր ուժերը բալաստի դեր են կատարելու մեծ նավում, նրանք տանելու են ընդդիմության ձայներից եւ հետո դուրս մղվելով՝ թեթեւացնելու են մեծ նավի ընթացքը՝ խորհրդարան անցնելիք երեք ուժով: Թե ով դուրս կմնա ընտրապայքարից, կամ միգուցե ընդդիմությունից Քոչարյանին ու Ծառուկյանին հարող ուժերը մի ճակատով հանդես կգան, շուտով կերեւա: Բայց նկատի ունեցեք՝ գործարարները երբեք վտանգի տակ չեն դնի իրենց ունեցվածքը եւ երբեք ձվերը մեկ զամբյուղում չեն դնի: Էլ չասած, որ ընդդիմության (ասենք՝ կարապետյանական ընդդիմության) պատրանքներով՝ իրենք են գալու իշխանության, իշխանության պատրանքներով՝ բոլոր նախկիններն անցնելու են պատմության գիրկն ու չեն մտնելու խորհրդարան:

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԵ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 09.04.2026, գինը՝ 200 դրամ, տպաքանակը՝ 800 օրինակ, տպագրւում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70ա: